

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԻ
ՀԱՏՎԱԾԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԵՎ «ՀԱՐՄՆԱՔԱՐ» ՀԱԳՍՏԻ ԳՈՏՈՒՑ ՄԻՆԶԵՎ
ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԻ ՀԱՏՎԱԾԻ՝ 2.8 ԿՄ
ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ և 6.5 Մ ԼԱՅՆՈՒԹՅԱՄԲ 1902.0-1902.5
ՆԻՇՈՒՄ ՃԵՄՈՒՂՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

լրամշակված



«Արխիտոն» ՍՊԸ տնօրեն՝

Ռ. Բարսյան



094194929; 093397780
mail: architon-td@mail.ru
noval.lk.noval@yandex.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	4
2. Հավելվածներ	4
3. Օգտագործվող հապավումները	4
4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	9
6. Նախատեսվող գործունեության վայրը, գործունեության իրականացման նպատակը.....	10
7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	11
8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը	11
9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը	17
9.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ	17
9.2. Սեյսմիկա և երկրաբանություն	18
9.3. Կլիմա և օդային ավազան	19
9.4. Հողային ռեսուրսներ	23
9.5. Ջրային ռեսուրսներ.....	24
9.6. Կենսաբազմաանություն.....	27
9.7. Հատուկ պահպանվող տարածքներ.....	32
9.8. Պատմամշակութային հուշարձաններ.....	32
9.9. Բնության հուշարձաններ.....	42
9.10. Սոցիալական-տնտեսական.....	43
10. Նախատեսվող գործունեության բնութագիրը, հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները.....	45
10.1 Շահագործման փուլ	46
10.2 Շինարարության փուլ:	49
10.3 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը	54
10.4. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	55
10.5. Օգտագործվող նյութեր.....	57
11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն/շինարարության, շահագործման և փակման փուլեր/.....	57
Շինարարության և շահագործման փուլեր.....	58
11.1.Օդային ավազան.....	58
11.2 Հողային ռեսուրսներ.....	59
11.3 Ջրային ռեսուրսներ.....	60
11.4 Կենսաբազմազանություն.....	60
11.5 Թափոններ.....	61
11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	62
11.7 Աղմուկ և թրթռում.....	63

11.8 Արտակարգ իրավիճակներ.....	63
11.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.....	64
11.10 Սոցիալական.....	64
11.11 Լանդշաֆտ և Բարեկարգում. կանաչապատում.....	65
12.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները (Բնապահպանական կառավարման պլան) ..	65
12.1. Օդային ավազան.	66
12.2. Հողային ռեսուրսներ.....	67
12.3 Ջրային ռեսուրսներ.....	67
12.4 Կենսաբազմազանություն.	68
12.5.Թափոններ.....	69
12.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	70
12.7 Աղմուկ և թրթռում.....	70
12.8 Արտակարգ իրավիճակներ.....	71
12.9 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.....	71
12.10 Սոցիալական.....	72
12.11 Լանդշաֆտ, բարեկարգում.....	73
13. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը (Մոնիթորինգ).....	74
14. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.....	75
15. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր).....	94
16. Հանրային քննարկումներ.....	97
17.Բողոքների ընթացակարգ.....	97
18.Փակման և հետփակման փուլեր. Ելնելով գործունեության բնույթից փակման և հետփակման փուլեր չի նախատեսվում:.....	97
Գրականություն.....	98

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Գեղարքունիքի մարզի Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի և «Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 նիշում ճեմուղու կառուցում:
Նախաձեռնող	Քաղաքաշինության կոմիտե, «Սևան» Ազգային Պարկ
Նախագծողի իրավաբանական հասցեն	ք. Մասիս 3-րդ թաղ. 10շ. բն 3
Փաստացի գործունեության հասցեն՝	Գեղարքունիքի մարզի «Սևան»ԱՊ-ի Սևան Ազգային պարկի «Հարսնաքար» հանգստի գոտուց - Լճաշեն Սևանի թերակղզի ավիամերձ հատված:
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	(architon-ltd@mail.ru 094/19-49-29)

2. Հավելվածներ

- Հավելված 1. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
- Հավելված 2. Հողամասի կոորդինատները, իրադրային հատակագծերը:
- Հավելված 3. Արտանետումների հաշվարկը
- Հավելված 4. Աղմուկի մակարդակի գնահատում
- Հավելված 5 . Համայնքի Ավագանու որոշումը
- Հավելված 6. Հանրային քննարկման արձանագրություն, լուսանկարներ, մասնակիցների ցանկ:
- Հավելված 7. Վճարման անդորրագիրը

3. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
 ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
 ԱՊ՝ ազգային պարկ

4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական

աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) – Մահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) – Մահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) – Մահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր

հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից: «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)- կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաքավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենք(14.12.2001թ.)- սահմանում է Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման համալիր ծրագրի նպատակը և խնդիրները, միջոցառումները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.)-Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում

քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 19-Ի N 1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 2343-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 31.07.2014թ.՝ ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 08.02.2018թ. «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ՉԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 108- Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում :
- ❖ ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը

ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:

- ❖ ՀՀ կառավարության 08 նոյեմբերի 2011թ. «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» N1396 որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 2 փետրվարի 2006 թ. «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-սթկ) եվ հայաստանի հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձև գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին» N 160-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 18 հունվարի 2007թ. «Սևան» Ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին N 205-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 18 դեկտեմբերի 2008թ. «ՄԵՎԱՆ» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման եվ քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» N 1563-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 30 մայիսի 2002թ «ՄԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՄԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ «ՄԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 927-Ն որոշում:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ կետի՝ «Փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում չթվարկված՝ Կառավարության հաստատած գործունեության

տեսակները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ անտառային հողերում կամ բնակավայրերի կանաչ գոտիներում կամ պատմամշակութային հուշարձանների սահմաններում կամ բնապահպանական հողերում, և որոնք ներառված չեն պետական փորձաքննական դրական եզրակացություն ստացած հիմնադրույթային փաստաթղթերում: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով»:

Գնահատման հաշվետվության բովանդակությունը կազմվել է Օրենքի 15-րդ հոդվածի Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան.

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Գնահատման հաշվետվություն կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

6. Նախատեսվող գործունեության վայրը, գործունեության իրականացման նպատակը.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Արխիտոն» ՍՊԸ-ի կողմից: Նախագծվող տեղամասը գտնվում է Սևան Ազգային պարկի Լճաշեն Սևանի թերակղզի հատվածում: Գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի «Սևան»ԱՊ-ի «Հարսնաքար» հագստի գոտի-Սևանա լճի ափամերձ հատվածի՝ 1902.0-1902.5 նիշում, կառուցվելու է 2,8 կմ երկարությամբ, 6,5մ լայնությամբ ճեմուղի:

Սևանա լճի առափնյա հատվածում կառուցապատման սահմանագիծ է հանդիսանում 1905նիշը (1903,5 ջրի հեռանկարային մակարդակը և գումարած 1,5մ ալիքի ազդեցության գոտին), սակայն ՀՀ կառավարության 2008թ. 1563-Ն որոշման պահանջներով առավել ցածր նիշերով առկա է ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի անցկացման հնարավորություն:

Գործունեության իրականացման նպատակը. նախատեսվող ճեմուղու կառուցման նպատակն է բարձրացնել Սևանա լճի տվյալ ափամերձ հատվածի գրավչությունը, վերացնել առաջնահերթ լուծման կարիք ունեցող այնպիսի գործոններ, ինչպիսիք են.

- Ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքի ոչ լիարժեքությունը,
- Ժամանցային հնարավորությունների բացակայությունը,
- Սանհանգույցների բացակայությունը:

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման հիմքերը

Նախատեսվող գործունեության՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Սևան Ազգային պարկի «Հարսնաքար» հագստի գոտի-Լճաշեն Սևանի թերակղզի հատվածում ճեմուղու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսացել.

- Գործունեության իրականացման նախագծային փաստաթղթերը:
- Սևան համայնքի կողմից Նախատեսվող գործունեության 2025թ. հոկտեմբերի 01-ի N ՆԹ-8553-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
- Գործունեությանն առնչվող այլ փաստաթղթեր:

8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը


Ենթակա տարածք. նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի և «Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 նիշով ճեմուղու կառուցում՝ 18200մ² տարածքի վրա: Ճեմուղին անցնում է թերակղզու հարավային մերձափնյա գոտու երկայնքով, լճի ջրի եզրից 12-ից մինչև 100 մ հեռավորության վրա: Ուղեգծի երկայնքով առկա են հանգստյան տներ, անտառապատ հատվածներ: Ծառերի քանակները և տեսակները կձշտվեն շինարարության ընթացքում, կապալառու կազմակերպության կողմից, Ազգային պարկի հետ համատեղ: Հին ծառերը կկտրվեն, իսկ արժեքավոր ծառատեսակները կտեղափոխվեն և կտնկվեն 1903,5 նիշից բարձր

հատվածներում: 1903.5 մ նիշից ցածր հատվածներում, ջրի բարձրացմանը խանգարող բոլոր ծառերը, թփերը համաձայն ՀՀ կառավարության որոշման ենթակա են հատման:

Գործունեության ենթակա տարածքում առկա են առանձին տնտեսվարողների կողմից կառուցված ճանապարհների հատվածներ, որոնք իրականացված են հատվածական քետոնի, սալիկի և այլ շինարարական նյութերով: Դրանք չեն ապահովում Սևանի ափի գծին զուգահեռ ճեմուղի ծառայելու գաղափարին, նաև տարաբնույթ ծածկույթների ու ընդհատվածության պատճառով խաթարում են լճի գեղագիտական ընկալումը: Բացակայում են նաև ճանապարհային միասնական պատվածքը, կահավորումը, լուսավորության համակարգը և այլ տարրերը: Գոյություն ունեցող կարճ հատվածների լայնական թեքությունը չի համապատասխանում նորմերի պահանջներին, տարածքում ջրահեռացման որևէ միջոցառում իրականացված չէ:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված:

«Սևան» ազգային պարկի» Լճաջին-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի և «Հարմար» հազստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 նիշով ճեմուղու նախագիծ



«Հայնախագիծ»ԲԲԸ-ի կողմից 2025թ.հուլիսին կատարվել են տեղամասի երկրաբանահետախուզական ուսումնասիրություններ:

Ճեմուղու ծրագծի ինժեներաերկրաբանական պայմաններն ուսումնասիրելու նպատակով կատարվել է ծրագծի երկայնքով ակնադիտական տեղագնում, 6 հորատանցքի անցում մեխանիկական սյունակային եղանակով, մինչև 2.6 մ խորությամբ, 13,8 մ ընդհանուր ծավալով:

Գեոմորֆոլոգիական տեսակետի ծրագծի տեղամասը տեղադրված է փոքր թեքությամբ լճապրոլուվիալ հարթավայրի սահմաններում, որն արևելյան մասում, մոտավորապես 2+100 պիկետից սկսած, կտրուկ նեղանում է, աստիճանաբար անցնելով ժայռային բլուրի հարավային լանջի ստորոտների:

Ներկայացվում է ծրագծի գրունտային կտրվածքի նկարագրությունը պիկետներով՝ հորատանցքերի տվյալների հիման վրա: Գրունտների մշակման կարգերը բերված են СНиП IV-2-82 համաձայն:

Պկ 0+980 – պկ 1+110

0,0 – 0,4 լիցքագրունտ ավազային, կոպիճով և խճավազով 15-20%, պառկապնդված:

- խտությունը՝ 1.7 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 27վ-II:

0,4 – 0,8 ավազ տարահատիկ, մոխրագույն, կոպիճով 15-20%, սակավախոնավ:

- խտությունը՝ 1.8 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 27վ-II:

0,8 – 2,0 տուֆաալերովիտի խիճ խճավազով, տեղ-տեղ մանր մեծաբեկորներով, գորշ կավավազի ու ավազի լցանյութով 15-20%:

- խտությունը՝ 2.1 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 12-Vp:

Պկ 1+110 – պկ 1+620

0,0 – 0,1 բուսահող կավավազային:

- խտությունը՝ 1.2 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 9ա-I:

0,1 – 1,0 ավազ տարահատիկ, դեղնագորշ, խճով ու խճավազով 15-20%, սակավախոնավ:

- խտությունը՝ 1.8 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 27վ-II:

1,0 – 1,8 կավավազ գորշ, կիսակոշտ, խճավազով ու խճով 15-20%:

- խտությունը՝ 1.7 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 34վ-II:

1,8 – 2,4 ավազ տարահատիկ, կոպիճով 15-20%, սակավախոնավ:

- խտությունը՝ 1.8 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 27վ-II:

Պկ 1+620 – պկ 1+900

0,0 – 0,2 լիրքագրունտ խճավազային, ասֆալտբետոնե ծածկույթով:

- խտությունը՝ 1.8 գ/սմ:
- կարգը ըստ մշակման դժվարության՝ 13-IVp:

0,2 – 1,8 ավազ մանրահատիկ, կոպիճով ու խճով, վատ հղկված մանր ճալաքարով 15-25%, սակավախոնավ:

- խտությունը՝ 1.8 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 27վ-II:

1,8 – 2,3 տուֆաալերովիտի խիճ խճավազով, գորշ կավավազի լցանյութով 20-25% :

- խտությունը՝ 2.1 գ/սմ:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 12-Vp:

Պկ 1+900 – պկ 2+290

0,0 – 0,2 ավազաքարի խիճ խճավազով, 15-20% դեղնագորշագույն ավազի լցանյութով:

- խտությունը՝ 2.0 գ/սմ:
- կարգը ըստ մշակման դժվարության՝ 12-Vp:

0,2 – 2,0 ավազաքար հողմահարված, ճեղքավոր, միջին ամրության:

- խտությունը՝ 2.3 գ/սմ:

• կարգը ըստ մշակման դժվարության՝ 28բ-VI:

Պկ 2+290 – պկ 2+330

0,0 – 1,0 լիրքագրունտ ավազային, խճով ու խճավազով 20-25%, պառկապնդված:

• խտությունը՝ 1.7 գ/սմ³:

• կարգը ըստ մշակման դժվարության՝ 27վ-II:

1,0 – 2,6 ավազ տարահատիկ, մոխրագույն, կոպիճով ու մանր ճալաքարով 15-20%, 1.8 մ-ից խոնավ, 2.1 մ-ից՝ ջրհագեցած:

• խտությունը՝ 1.8 գ/սմ³:

• կարգը ըստ մշակման դժվարության՝ 27վ-II:

Հիդրոլոգիա. Ծրագծի վերջնամասում, 2+330 պիկետում փորված հորատանցք 6-ում 2.1 մ խորությունում հայտնաբերվել է գրունտային ջուր:

Հորատանցքերի նկարագրությունը.

Հ- 1 (պկ 0+980)

0,0 – 0,4 լիցքագրունտ ավազային, կոպիճով և խճավազով 15-20%, պառկապնդված

0,4 – 0,8 ավազ տարահատիկ, մոխրագույն, կոպիճով 15-20%, սակավախոնավ 0,8 – 2,0

տուֆալերոլիտի խիճ խճավազով, տեղ-տեղ մանր մեծաբեկորներով, գորշ կավավազի ու ավազի լցանյութով 15-20%:

Հ- 2 (պկ 1+240)

0,0 – 0,1 բուսահող կավավազային

0,1 – 1,0 ավազ տարահատիկ, դեղնագորշ, խճով ու խճավազով 15-20%, սակավախոնավ

1,0 – 1,8 կավավազ գորշ, կիսակոշտ, խճավազով ու խճով 15-20%

1,8 – 2,4 ավազ տարահատիկ, կոպիճով 15-20%, սակավախոնավ:

Հ- 3 (պկ 1+520)

0,0 – 0,1 բուսահող կավավազային

0,0 – 0,6 ավազ մանրահատիկ, դեղնագորշ, խճա-խճավազով 15-20%, սակավախոնավ

0,6 – 1,1 կավավազ գորշ շագանակագույն, կիսակոշտ, խճավազով և խճով 15-20%

1,1 – 2,5 ավազ մանրահատիկ, մոխրագույն, խճով ու խճավազով 20-25%, միջակայքի վերջում՝ 35-40%, սակավախոնավ:

Հ- 4 (պկ 1+720)

0,0 – 0,2 լիցքագրունտ խճավազային, ասֆալտբետոնե ծածկույթով 0,2 – 1,8 ավազ

մանրահատիկ, կոպիճով ու խճով, վատ հղկված մանր ճալաքարով 15-25%, սակավախոնավ

1,8 – 2,3 տուֆալերոլիտի խիճ խճավազով, գորշ կավավազի լցանյութով 20-25%:

Հ- 5 (պկ 2+050)

0,0 – 0,2 ավազաքարի խիճ խճավազով, 15-20% դեղնագորշագույն ավազի լցանյութով

0,2 – 2,0 ավազաքար հողմահարված, ճեղքավոր, միջին ամրության:

Հ- 6 (պկ 2+330)

0,0 – 1,0 լիրքագրունտ ավազային, խճով ու խճավազով 20-25%, պառկապնդված 1,0 – 2,6

ավազ տարահատիկ, մոխրագույն, կոպիճով ու մանր ճալաքարով 15-20%, 1.8 մ-ից խոնավ,

2.1 մ-ից՝ ջրհագեցած:

ԳՋՄ՝ 2,1 մ – 15.07.2025թ.

Տարածքի իրադրության հատակագիծ



Ֆիզիկաերկրաբանական Նախագծվող ճեմուղու երկայնքով վտանգավոր ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ու պրոցեսներ հետազննման ընթացքում չեն դիտվել:

Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող ճանապարհով:

Տարածքում բացակայում է ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, կենդանիների բնադրավայրերը, քանի որ տարածքը երկար տարիներ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների:

9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը

9.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Սևան խոշորացված համայնքի տարածքում: Մարզը սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից սահմանակից է Ադրբեջանին: Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Մարզի գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի Արևելյան Սևանի, Վարդենիսի, որտեղ առկա են տասնյակ հրաբխային կոներ՝ հատկապես ուշագրավ են Աժդահակ և Արմաղան հրաբուխները: Լեռների ձագարաձև խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ: Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, իսկ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Ռելիեֆը անհարթ բլրային է: Մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան ուղղությամբ է: Տարածքը տափաստանային միջին լեռնային (1400-2300 ծ.մ.բ.), իրեն բնորոշ տափաստանային բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ափամերձ տարածքները՝ առաջացրել են արևմտյան ափի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը: Տարածաշրջանում ռելիեֆը բլրաշատ ափսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:

9.2. Մեյամիկա և երկրաբանություն

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելիեֆով, խորը ձորակներով: Ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են Հրազդան գետի վերին հոսանքի այլուվիալ նստվածքների և չորրորդական լավաների հետ:

Շրջանում մթնոլորտային տեղումներից առաջացած ջրահոսքերը ներծծվելով ապարների շերտերով ու ծակոտիկներով, սեզոնային բնույթի աղբյուրների և ժամանակավոր հոսքերի տեսքով բեռնաթափվում են Սևանա լիճ:

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի նորմերի՝ ըստ սեյսմիկ հատկության տեղագննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:



9. 3. Կլիմա և օդային ավազան

Կլիմա. Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը, ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ:

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները Սևան քաղաքի համար՝ որպես խոշորացված համայնք:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2 Օդի միջին ջերմաստիճան (արդիականացման ենթակա)

Քննակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
23. Սևան լճային	-5.3	-5.0	-1.7	4.0	8.7	12.9	16.1	16.3	13.1	8.2	2.4	-2.7	5.6	-32.5	32.9

Օդի հարաբերական խոնավությունը (%)

ՕՊԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	ըստ ամիսների												Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
23.Սևան լճային	74	74	73	72	73	73	74	72	71	69	70	73	72	74	65	72	63	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

ՍԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$ մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
23.Սևան լճային	18	24	38	64	89	78	54	37	33	47	31	18	531	129	402
	22	23	37	30	43	41	43	52	37	36	31	16	52		

Քամի

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնեցիությունը, %								Ամբողջի կրկնեցիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Ֆերակչող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսի, մ/վ	Ֆերակչող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունիսի, մ/վ
		ըստ ուղղությունների													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

29.Սևան ցաղաք	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4.2	Արլ	3.2	Արմ	5.4
		4.1	4.0	3.3	2.7	2.9	5.3	5.4	3.7						
	ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3.3				
		3.9	3.7	3.2	2.5	3.8	6.3	5.5	3.4						
	հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3.1				
		4.7	4.1	3.2	2.7	2.1	2.5	3.1	2.8						
	հոկտեմբեր	7	5	7	3	4	15	45	14	33	2.7				
		4.0	3.8	2.7	2.2	2.3	5.3	4.3	2.7						

ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵՎԱԿԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն ժամկետ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
24.Սևան քաղաք	ժ	149	154	189	197	253	305	330	316	274	217	170	143	2697
	օր	3	3	2	2	1	0.2	0.1	0.1	0.2	1	2	3	18

Գործունեության տարածքը գտնվում է ցուրտ կլիմայական գոտում: Սևանա լճի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -32.5°C է, ձմռանը շատ ցուրտ, քամոտ, խոնավ, բացարձակ առավելագույնը՝ 32.9°C , միջին հարաբերական խոնավությունը 72%, տեղումների միջին քանակությունը կազմում է 531մմ, քամու միջին տարեկան արագությունը՝ 3.3 մ/վ, քամու հաշվարկային արագությունը 25 տարվա կրկնելիությամբ կազմում է 26մ/վրկ:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, կազմում է 114 սանտիմետր:

Օդային ավազան. Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 45 օդերևութաբանական կայաններում՝ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:



Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել մարդու գործունեության՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, թափոնների բաց այրման, ավտոտրանսպորտի օգտագործման և բնական՝ լեռնային փոշու տարածում, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետման հետևանքով: Աղտոտման հիմնական պատճառներն են՝ Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Մարզում չկան արտադրական ձեռնարկություններ, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) համեմատությամբ:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի՝ օդի ֆոնային կոնցենտրացիաները 10-50 և մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում համապատասխանաբար Սևան բնակավայրը, օդի ֆոնային կոնցենտրացիաներն են.

Սևան

- Փոշի՝ 0.095 մգ/մ³

Համաձայն Գեղարքունիքի մարզի միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ Սևանի տարածաշրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ միջին հումուսային ալկալացված սևահողերը՝ լեռնային սևահողերի ենթատիպով: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա:

Ռեակցիան վերին հորիզոններում թույլ հիմնային է, ներքևում՝ չեզոք:

Լեռնային սևահողերն օգտագործվում են մեծ մասամբ որպես խոտհարք և արոտավայր, իսկ տեղ-տեղ նաև որոշ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար (գարի, երկարամյա խոտեր):

Հանքաբանական կազմում գերակշռում են թեթև և միջին շրջանի միներալներ:

Համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերի մշակման ատլասի՝ Սևանի ավազանի գոտում առանձնացված է՝ երկու գոտի՝ Առաջին գոտու մեջ մտնում են Գեղարքունիքի մարզի մինչև 2000 մ բարձրությունների վրա տեղաբաշխված տարածքները: Հողածածկույթը կազմում են կարբոնատային և տիպիկ լեռնային սևահողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի միջին խտությունը տատանվում է 1,18-1,22գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,63-2,70 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 54,8- 55,1 % սահմաններում: Ոռոգման երկրորդ գոտին ներառում է Գեղարքունիքի մարզի այն տարածքները, որոնք տեղաբաշխված են 2000 մ-ից ավելի բարձրությունների վրա: Այս գոտում հանդիպում են կրազերծված սևահողերը և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,17-1,21 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,52-2,59 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 53,2-53,6 % սահմաններում:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները, գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն՝ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. տարեկան ամփոփ և 2025թ. եռամսյակային տեղեկագրերում, Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

9.5. Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճ. Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձևհալոցքային ջրեր լցվելու

արդյունքում: Չորս կողմում շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի 3 մարտի «ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 177-Ն որոշման՝ լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83,3 մ (Փոքր Սևան): Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասն անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը՝ մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Մաքման կայանների նախատեսումը և ավիամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ավիամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: ՀՀ կառավարության որոշմամբ Պետրյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Համաձայն կազմակերպության կողմից 2025 թվականի 3-րդ եռամսյակում Սևանի ՋԿՏ-ում

հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 18 դիտակետում:

2025թ. հուլիսի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1280.311 կմ², ծավալը՝ 38.4202 կմ³, իսկ սեպտեմբերի 30-ին համապատասխանաբար՝ 1277.655 կմ² և 38.0621 կմ³: www.meteomonitoring.am 68 Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը հուլիս ամսին կազմել է 4.353մլն մ³, օգոստոսին՝ 2.975 մլն մ³, սեպտեմբերին՝ 3.024մլն մ³:

Շրջակա միջավայրի և մարդու առողջության համար կարևոր է ջրային ռեսուրսների որակական հատկանիշների պահպանումը: Ջրային ռեսուրսների աղտոտման պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը, հողահանդակներից անձրանջրերի միջոցով տեղափոխված պեստիցիդները, վնասակար նյութերը և այլն: Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ՋՏԿ-ի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N75-Ն որոշման համաձայն(Հավելված 5), ընդհանրական գնահատման ցուցանիշի դասով՝ 1-5:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2025թ. 3-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Սևանա լճի ջրի որակական մոնիթորինգն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների 3 դիտակետում՝ տարբեր խորության շերտերում: Մեծ Սևանի 22-րդ կայանի մոտ մակերևութային շերտում ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), 0.5մ և 5մ խորության շերտերում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), 10մ խորության շերտում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), 20մ, 25մ և 30մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Փոքր Սևանի 4-րդ կայանի մոտ մակերևութային և 0.5մ խորության շերտերում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 5մ խորության շերտում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 10մ խորության շերտում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 20մ խորության շերտում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 30մ, 55մ, 70մ և 80մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Փոքր Սևանի Այրիվանքի մոտ մակերևութային շերտում ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 5մ խորության շերտում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), 10մ և 20մ խորության շերտերում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 30մ և 40մ խորության շերտերում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս):

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

9.6. Կենսաբազմաանություն

Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ը:

Տարածաշրջանը լեռնային է և բնորոշվում է լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականությամբ՝ ցածր և միջին լեռնաանտառային, մարգագետնատափաստանային, մերձալպյան, ալպյան: Բնական անտառները՝ գիհի և կաղնի ծառատեսակներով ոչ մեծ կղզյակներով տեղակայված են Արեգունյաց լեռնաշղթայի ուղղաձիգ լանջերի վրա, իսկ առանձին ծառեր և ծառերի փոքր խմբեր հանդիպում են նաև լճափի այլ հատվածներում:



Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500մ՝ տափաստանային և գորշ կարբոնատային, անտառային տիպերով: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են հիմնականում գիհու և կաղնու անտառները: Իսկ ցածրադիր վայրերում, լճից ազատված ավազուտների վրա գերակշռում են անապատներն ու կիսաանապատները: Որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային

ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաձ գիհուտները և այլն:

Բուսական աշխարհ: Մարզի հիմնական անտառ կազմող ծառատեսակները հանդիսանում են սոճին, եղևնին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան, փշատենին և այլ փշատերև ու սաղարթավոր ծառատեսակներ: Սևանա լճի ջրից ազատված հողազրույթները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ):

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային/*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռեիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաձ գիհուտներ (*Juniperus depressa*) և այլն: Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը:



Չիչխան

Տարածված են նաև արոսենու (արոսենի Կուզնեցովի (*Sqrbus kuznetsqvii*), արոսենի Հայաստանի (*S.hajastana*), արոսենի հունական (*S.graeca*)), մասրենու (*Rqsa spinqsissima*, *R.canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), ալոճենու (*Crataegus qorientalis*), ուռենու (*Salix caprea*) և այլ համակեցություններ:

Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP): Տարածաշրջանում կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը՝ ուտելի են: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (*Festuca* sp.), որումի (*Lolium* sp.) 95.1 և դաշտավլուկների

(Poa sp.) տարբեր տեսակներ:

Ռեյիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզայիկ բնույթ՝ հարուստ և բազմազան: Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ:

Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի) այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրձուն Սևանի, Ոզնաթուփ Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային /*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobvii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ *Cousinia fedorovii* Takht, Լրջուն Սևանի-*Isatis sevangensis* N. Busch, Թրաշուշան հայաստանյան-*Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապագլուխ ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնառվույտ հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk., Արոսենի Հայաստանյան-*Sorbus hajastana* Gabr/խոցելի տեսակ է/:



Վիշապագլուխ ավստրիական



Գառնառվույտ հայկական

Ազգային պարկի և պահպանական գոտու տարածքի շուրջ 60 բուսատեսակներ օգտագործվում են որպես դեղաբույսեր, իսկ շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով՝ 44 տեսակ կաթնասուններ՝ գիշատիչներ, միջատակերներ, կրծողներ, չղջիկներ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև

արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձկներ:

Կաթնասունները պատկանում են հետևյալ կարգերին.

- ❖ Միջատակերներ (Insectivora),
- ❖ Կրծողներ (Rodentia),
- ❖ Նապաստակներ (Logomorpha),
- ❖ Չղջիկներ (Chiroptera),
- ❖ Գիշատիչներ (Carnivora),
- ❖ Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Համաձայն «Գեղարքունիք 1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի՝ մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հողվածոտանիներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout-Salmo ischchan Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Սմառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*), Գեղարքունի (*S. ischchan gegarkuni*), Բոջակ (*S. ischchan danilewskii*): Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը կլիմայավարժեցված սիգն է (Whitefish-Coregonus lavaretus): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (*Khrami carp Varicorhinus capoeta sevangi*) և Սևանի բեղուն (*Sevan 17 barble-Barbus goktschaicus*): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (*Crucian carp-Carassius auratus gibelio*), որը պատահաբար լիճ է ներթափանցել արարատյան դաշտի ջրային համակարգերից:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ՝ Ցատկողներ (Salientia) կարգին պատկանող՝ Լճագորտ (*Rana ridibunda*), Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), Կանաչ դոդոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*):

Սողուններից հանդիպում են՝ Սպիտակափոր ժայռային, Նաիրյան ժայռային, Ռոստոմբեկովի ժայռային, Հայկական ժայռային, Վալենտինի ժայռային մողեսները, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շելկովնիկի ծառագորտը[11]:

Ջրային կամ ջրածահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի իջեցումը, ինչպես նաև ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների վրա:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ՝ ձկնկուլ (Pelecaniformes) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes) -11 տեսակ, ֆլամինգո (Phoenicopteriformes) - 1

տեսակ, հոպոպ, սագեր, բադեր և այլն: Թռչուններից 48 տեսակը բնադրող են: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորդրի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն: Պարկում մեծ պոպուլյացիաներով հանդիպում են՝ մեծ քնամուկը (*Glis glis*), պարսկական սկյուռը (*Sciurus persicus*), անտառային մուկը (*Apodemus sylvaticus*), այծյամը (*Capreolus capreolus*), լայնականջ ոզնին (*Tadarida teniotis*) և այլն:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ Կաթնասունների 6 տեսակ, (գործ արջը, ջրասամույրը, անտառային կատուն, բեզոարյան այծ-*Capra aegagrus Erxleben* և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-*Eremias arguta transcaucasica Darevsky, 1953*) և փոքրասիական մողեսները- *Darevskia rostombekovi Darevsky 1957*), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-*Larus armenicus*), վարդագույն հավալուսն - *Pelecanus onocrotalus Linnaeus*, ձկնկուլը և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - *Oxyura leucocephala Scopoli*, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղուն (*Barbus goetschaicus Kessler*) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi, Filippi*) հողվածոտանիներից՝ Արին կապտաթիթեռը - *Maculinea arion zara Jachontov*, Մթնշաղային կապտաթիթեռ - *Maculinea nausithous*, Անտեսված կապտաթիթեռ - *Agrodiaetus neglectus Dantchenko*, Նինայի կապտաթիթեռ - *Agrodiaetus ninae Forster*, Թուրքական կապտաթիթեռ - *Agrodiaetus turcicus Koçak*, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում, Տափաստանային հողմավար բազե-*Falco naumanni Fleischer/ խոցելի տեսակ է, Հայաստանում հազվագյուտ տեսակ է բնադրման տեղային բնույթով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում/, Ճչան կարապ-*Cygnus cygnus/հազվագյուտ-խոցելի տեսակ է, ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում /, Լճային խխունջ- *Acroloxus lacustris/Հայաստանում, հավանաբար, անհետացած տեսակ է, Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով ներկայում գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող/, Ավրորինա դեղնաթիթեռ-*Colias aurorina Herrich-Schaffer/հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»/:****



Հայկական որոր



Նինայի կապտաթիթեռ

2025թ. 2-րդ եռամսյակում կենսաբազմազանության ուսումնասիրություն է իրականացվել է «Սևան» ազգային պարկի մշտական դիտավայրերում: «Սևան» ազգային պարկի տարածքում կենսաբազմազանության մոնիթորինգ իրականացվել է 27 փորձափրայարակներում և տրանզեկտներում, ինչպես նաև հարակից տարածքներում: Մոնիթորինգի արդյունքում դիտարկվել են մի շարք ինդիկատոր, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Գրանցվել է 300-ից ավել տեսակ:



Նկար 8. Կենսաբազմազանության դարկված տեսակները «Սևան» ազգային պարկում

Նախատեսվող գործունեության տարածքը տարիներ շարունակ գտնվում է մարդու ակտիվ գործունեության գոտու շրջանում, ուստի ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են:

9.7. Հատուկ պահպանվող տարածքներ.

Մարզի բնության հատուկ պահպանվող տարածք է «Սևան» ազգային պարկը՝ 147.343 հա մակերեսով: Այն գտնվում է շրջակա միջավայրի նախարարության կառավարման ներքո՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործառույթների միջոցով: Այն բաժանվում է չորս՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրացիոն և տնտեսական գոտիների: Պարկի տարածքում են գտնվում «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի» արգելոցները՝ 7464 հա ընդհանուր մակերեսով, որից ցամաքայինը կազմում է 4289հա, ջրայինը՝ 3175հա: Այստեղ է գտնվում նաև երկու՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրերն՝ ընդհանուր 2652հա մակերեսով:

9. 8. Պատմամշակութային հուշարձաններ.

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ սահմանվում է Սևան բնակավայրի վարչական տարածքի համար հուշարձանների ցանկը:

ՍԵՎԱՆ քաղաք

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԱՄՐՈՑ ՄԵԾԵՓ	մթա	0,6 կմ	3	Գոմաձոր թաղամաս, Մեծեփի գազաթին, քաղաքի

					1հգ մ		հեռուստաաշտարակ ի մոտ
2.			ԳԵՐԵՉՄԱՆՈՑ		9- 20- րդ դդ.	հվ-աե մասու մ	Տ Ցամաքաբերդ թաղամասի եզրին, երկաթգծից ձախ
	2.1.		խաչքար		9- 10- րդ դդ.		Յ ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել
	2.2.		խաչքար		11- րդ դ.		Յ ընկած գետնին
	2.3.		խաչքար		12- 13- րդ դդ.		Յ ընկած գետնին, եզրերը վնասված, վերին ձախ մասը չի պահպանվել
	2.4.		խաչքար		12- 13- րդ դդ.		Յ երկատված, կանգնեցված գետնին
	2.5.		խաչքար		14- 15- րդ դդ.		Յ ընկած գետնին, եզրերը ջարդված
	2.6.		խաչքար		14- 15- րդ դդ.		Յ ընկած գետնին, վերնամասը՝ չի պահպանվել
	2.7.		տապանաքար՝ լիմեցի Կարապետ վարդապետի		16- 17- րդ դդ.		Տ
	2.8.		տապանաքար՝ Թումանի		170 1 թ.		Տ
	2.9.		տապանաքար՝ Խաչատուրի		170 8 թ.		Տ
	2.10		տապանաքար՝ Մասունի		173 1 թ.		Տ
3.			ԳԵՐԵՉՄԱՆՈՑ		9- 20- րդ դդ.	հս-ամ մասու մ	Տ Գոմաձոր թաղամասի հս եզրին, գործող գերեզմանոցի հվ մասում
4.			ՂԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏ		մթա 2-1 հզմ	հս եզրին	Յ Ցամաքաբերդ թաղամասում, «Սևա ն» հյուրանոցից 300մ աե

5.			ԵԿԵՂԵՑԻ	9-10-րդ դդ.	0,1 կմ հս	Տ Գումաձոր թաղամաս, միջնադարյան գերեզմանոցի տարածքում, ավերված
	5.1.		գերեզմանոց	10-17-րդ դդ.		Տ եկեղեցուց աե
	5.1.1		խաչքար	12-րդ դ.		Յ խրված հողի մեջ
	5.1.2		խաչքար՝ Սարգսի	12-13-րդ դդ.		Յ ընկած գետնին, երկատված
	5.1.3		խաչքար	12-13-րդ դդ.		Յ կիսով խրված հողի մեջ
	5.1.4		խաչքար	12-13-րդ դդ.		Յ խրված հողի մեջ
	5.1.5		խաչքար	12-13-րդ դդ.		Յ ընկած գետնին, երկատված
	5.1.6		խաչքար	12-13-րդ դդ.		Յ ընկած գետնին, երկատված
	5.1.7		խաչքար	13-րդ դ.		Յ խրված հողի մեջ
	5.1.8		խաչքար	13-րդ դ.		Յ ընկած գետնին, եզրերը վնասված
	5.1.9		խաչքար	14-15-րդ դդ.		Յ ընկած գետնին
6.			ԵԿԵՂԵՑԻ	1924 թ.	հս-ամ մասում	Տ Գումաձոր թաղամասի եզրին, Մեծեփ սարի լանջին
7.			ԵԿԵՂԵՑԻ Ս. ԳԵՎՈՐԳ	19-րդ դ.	հս-աե մասում	Տ Ցամաքաբերդ թաղամասի կնտ.-ում

7.1.		խաչքար	11-րդ դ.		Յ ազուցված անպատին, արտաքուստ
7.2.		խաչքար	12-13-րդ դդ.		Յ հվ ավանդատանը, ձախ եզրը ջարդված
7.3.		գերեզմանոց	11-19-րդ դդ.		Տ եկեղեցուց հվ
	7.3.1	խաչքար	12-րդ դ.		Յ ընկած գետնին
	7.3.2	խաչքար	14-15-րդ դդ.		Յ խրված հողի մեջ
	7.3.3	խաչքար	14-15-րդ դդ.		Յ պատվանդանին
8.		խաչքար	9-10-րդ դդ.	հս-անմասում	Յ Ցամաքաբերդ, թաղամաս, «Սևան» հանգստյան տան տարածքում, պատվանդանին, վերին և ստորին ձախ անկյունները կոտրված
9.		խաչքար	11-12-րդ դդ.	հս-անմասում	Յ Ցամաքաբերդ, թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
10		խաչքար	11-12-րդ դդ.	հս-անմասում	Յ Ցամաքաբերդ, թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
11		խաչքար	11-12-րդ դդ.	հս-անմասում	Յ Ցամաքաբերդ, թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
12		խաչքար	11-12-րդ դդ.	հս-անմասում	Յ Ցամաքաբերդ, թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից

							աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
13			խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	Յ	Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
14			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՉՈՅՎԱԾՆԵ ՐԻՆ	1980 թ.	ք. մ.	Տ	Գոմաձոր թաղամաս ճարտ.՝ Ս. Մանվելյան
15			ՄԱՏՈՒԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	16-րդ դդ.	ամ մասում	Տ	Գոմաձոր թաղամաս, Մեծեփ սարի աե լանջին
	15.1		խաչքար	12-րդ դդ.		Յ	ագուցված աե պատին, ներքուստ
	15.2		խաչքար	12-13-րդ դդ.		Յ	ագուցված ամ պատին, ներքուստ
	15.3		խաչքար	12-13-րդ դդ.		Յ	ներսում, երկատված
	15.4		խաչքար	12-13-րդ դդ.		Յ	ընկած գետնին
	15.5		խաչքար	14-15-րդ դդ.		Յ	կանգնեցված ներսում
16			ՄԱՏՈՒԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	16-17-րդ դդ.	հս մասում	Տ	Յամաքաբերդ թաղամաս
17			ՌԵՍՏՈՐԱՆԻ ՇԵՆՔ. «ԾՈՎԻՆԱՐ» ՌԵՍՏՈՐԱՆԸ	1963 թ.	Սևանի ափին	Տ	ճարտ.՝ Ռ. Իսրայելյան
18			ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ. ՍԵՎԱՆԻ ՎԱՆՔԸ	9-20-րդ դդ.	հս-աե մասում	Յ	թերակղզում
	18.1		Եկեղեցի ս. Առաքելոց	874 թ.		Յ	
		18.1.1.	խաչքար	10-րդ դդ.		Յ	հենած բեմին, 3 խաչքարերից ձախից 1-ինը

	18.1.2.		խաչքար՝ Ղազարի	13-րդ դ.	Յ	հենած հս պատին
	18.1.3.		խաչքար	14-15-րդ դդ.	Յ	հենած հվ պատին, ներքուստ
	18.1.4.		խաչքար՝ Ներսեսի	1425 թ.	Յ	հենած հվ պատին, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
	18.1.5.		խաչքար	1510 թ.	Յ	հենած խորանի հս պատին, վերին և ստորին աջ անկյունները՝ կոտրված, թվակիր
	18.1.6.		խաչքար	16-րդ դ.	Յ	կանգնեցված հվ պատի մոտ, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
	18.1.7.		խաչքար	16-րդ դ.	Յ	բեմին, արձանագիր
	18.1.8.		խաչքար՝ Հայրապետի և Հրեպեկայի («Խաչելություն»)	1653 թ.	Յ	խորանում, պատվանդանին կազմող՝ Տրդատ բերվել է 19-րդ դ. կեսին՝ Նորաշեն գյուղից
	18.1.9.		տապանաքար	1875 թ.	Յ	ներսում, բերված Բջնիից
18.2			Եկեղեցի ս. Աստվածածին	874 թ.	Յ	
	18.2.1.		գավիթ	1653 թ.	Յ	
		18.2.1.1.	խաչքար	9-10-րդ դդ.	Յ	
		18.2.1.2.	խաչքար	9-10-րդ դդ.	Յ	
		18.2.1.3.	խաչքար	10-11-րդ դդ.	Յ	հենած հս պատին, ներքուստ, եզրերը ջարդոտված

		18.2.1.4.	խաչքար	11-րդ դ.	Յ	հենած հս պատին, վերնամասը՝ չի պահպանվել
		18.2.1.5.	խաչքար	11-12-րդ դդ.	Յ	պահպանվել է միջին մասը
		18.2.1.6.	խաչքար	11-12-րդ դդ.	Յ	տեղադրված ամ պատին, ստորին ձախ և վերին աջ անկյունները՝ կտրված
		18.2.1.7.	խաչքար	12-րդ դ.	Յ	վերնամասը՝ չի պահպանվել
		18.2.1.8.	խաչքար՝ «Թևավոր խաչ»	12-րդ դ.	Յ	հենած հվ պատին, արտաքուստ, վերին խաչաթևը չի պահպանվել, արձանագիր խաչքարը Սրան է բերվել Դոմաշեն գյուղից
		18.2.1.9.	խաչքար	12-13-րդ դդ.	Յ	ստորին մասը չի պահպանվել
		18.2.1.10.	խաչքար	12-13-րդ դդ.	Յ	եզրագոտին ջարդոտված
		18.2.1.11.	խաչքար	12-13-րդ դդ.	Յ	վերնամասը՝ չի պահպանվել
		18.2.1.11.	խաչքար	12-13-րդ դդ.	Յ	հենած եկեղեցու ամ պատին, արտաքուստ, մուտքից ձախ
		18.2.1.11.	խաչքար	13-րդ դ.	Յ	աջ եզրը կտրված
		18.2.1.11.	խաչքար	13-րդ դ.	Յ	բեկոր
		18.2.1.11.	խաչքար	15-րդ դ.	Յ	

		18.2.1.1 6.	խաչքար	15- 16- րդ դդ.		Յ հենած ամ պատին, արտաքուստ
		18.2.1.1 7.	խաչքար	15- 16- րդ դդ.		Յ
		18.2.1.1 8.	խաչքար	15- 16- րդ դդ.		Յ ներսում
		18.2.1.1 9.	խաչքար	15- 16- րդ դդ.		Յ տեղադրված հվ պատին, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
		18.2.1.2 0.	խաչքար	15- 16- րդ դդ.		Յ հենած հս պատին, ներքուստ
		18.2.1.2 1.	խաչքար	15- 16- րդ դդ.		Յ հենած հվ պատին, ներքուստ
		18.2.1.2 2.	խաչքար՝ Խաթունի	15- 16- րդ դդ.		Յ հենած հս պատին
		18.2.1.2 3.	խաչքար	15- 16- րդ դդ.		Յ տողադրված հվ պատին, ներքուստ
		18.2.1.2 4.	խաչքար	155 1 թ.		Յ հենած հս պատին, բեկոր
		18.2.1.2 5.	խաչքար	16- րդ դ.		Յ հենած ամ պատին, արտաքուստ, մուտքից աջ
		18.2.1.2 6.	խաչքար	16- րդ դ.		Յ վերնամասը՝ չի պահպանվել
		18.2.1.2 7.	խաչքար	16- րդ դ.		Յ հենած հս պատին, եզրերը ջարդոտված
		18.2.1.2 8.	խաչքար	16- րդ դ.		Յ արձանագիր, ստորին եզրը չի պահպանվել

		18.2.1.2 9.	խաչքար	16- 17- րդ դդ.	Յ	հենած հս պատին, ստորին և վերին եզրերը կտրտված
		18.2.1.3 0.	խաչքար	16- 17- րդ դդ.	Յ	հենած հս պատին, ներքուստ
		18.2.1.3 1.	խաչքար	16- 17- րդ դդ.	Յ	աջակողմյան մասը չի պահպանվել
		18.2.1.3 2.	խաչքար	16- 17- րդ դդ.	Յ	տեղադրված հվ պատին, վերնամասը՝ չի պահպանվել
		18.2.1.3 3.	խաչքար	16- 17- րդ դդ.	Յ	վերնամասը՝ չի պահպանվել
		18.2.1.3 4.	խաչքար	16- 17- րդ դդ.	Յ	պահպանվել է միջնամասը
		18.2.1.3 5.	խաչքար	16- 17- րդ դդ.	Յ	արձանագիր, ստորին մասը չի պահպանվել
		18.2.1.3 6.	խաչքար	161 5 թ.	Յ	հվ-ամ անկյան մոտ, վերին աջ անկյունը կտրտված
		18.2.1.3 7.	տապանաքար	15- 16- րդ դդ.	Տ	հվ պատի մոտ, եզրերը ջարդոտված
18.3 .			Եկեղեցի ս. Հարություն	305 թ, 9-րդ դ.	Յ	ավերված
18.4 .			ճեմարանի շենք	9-րդ դ.	Յ	վրկնգ.՝ 1834-1835 թթ., 1907թ.
18.5 .			գերեզմանոց	9- 16- րդ դդ.	Յ	Եկեղեցիների շուրջը
	18.5.1.		խաչքար	9- 10-	Յ	ս. Աստվածածին Եկեղեցուց 10 մ աե, կանգնեցված

				րդ դդ.		գետնին, ձախ եզրագոտին ջարդված
	18.5.2.		խաչքար	9- 10- րդ դդ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին
	18.5.3.		խաչքար	12- 13- րդ դդ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճաններից աջ, 4 խաչքարերից ձախից 1-ինը
	18.5.4.		խաչքար	121 2 թ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում
	18.5.5.		խաչքար՝ Աբիհասանի	122 7 թ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ աե, վերնամասը՝ կոտրված
	18.5.6.		խաչքար	146 2 թ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում, թվակիր
	18.5.7.		խաչքար՝ Պռոշի	15- 16- րդ դդ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում
	18.5.8.		խաչքար	15- 16- րդ դդ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում, երկատված
	18.5.9.		խաչքար՝ Սուլթանի	15- 16- րդ դդ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին կանգնած 4 խաչքարերից ձախից 1-ինը
	18.5.10		խաչքար	15- 16- րդ դդ.		Յ ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ աե, երկատված, ընկած գետնին

	18.5.11		խաչքար	155 7 թ.		Ք ս. Աստվածածին եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին կանգնած զույգ խաչքարերից աջակողմյանը
	18.5.12		տապանաքար	15- 16- րդ դդ.		Տ ս. Աստվածածին եկեղեցուց 15 մ հս

9.9. Բնության հուշարձաններ.

Գեղարքունիքի մարզում և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ: Համաձայն 2021թվականի հոկտեմբերի 21-ի N1718-Ն որոշման՝ ավելացվել է «Թառ(Կարմիր Կատար)» հրաբուխ երկրաբանական հուշարձանը, որի արդյունքում երկրաբանական հուշարձանների թիվը դարձել է 8:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, առանձնապես ուշագրավ բնական հուշարձաններ, խառնարանային լճեր, խարամային կոներ, ընդարձակ քարային ծովեր:

Աղյուսակ 8

	Երկրաբանական հուշարձաններ		
1.	«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ	
2.	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ	
3.	«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արևելյան ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա	
4.	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք	
5.	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ	
6.	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ	

7.	«Հայրավանք» բրաժո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ	
	Ջրաերկրաբանական		
1.	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա	
2.	«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում	
3.	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա	
4.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա	
5.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա	
6.	«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա	
	Ջրագրական		
1.	«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին	
	Կենսաբանական		
1.	«Ենթալպյան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ	

Գեղարքունիքի մարզ, Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) առկա են նաև «Օֆիոլիտային ապարների» մերկացումները:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան պատմամշակութային, բնության հուշարձաններ:

9.10. Սոցիալական-տնտեսական.

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ Գեղարքունիքի մարզի տարածքը կազմում է 5351քառ.կմ, ներառում է 5 քաղաքներ և 93 գյուղական բնակավայրեր: Մարզի տարածքում է գտնվում Սևանա լիճը և «Սևան»ԱՊ-ը: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: 2024թ. տարեսկզբի դրությամբ մարզի բնակչությունը կազմում է 213,2հազ. մարդ:

Տարածք Territory	5 351 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	18.0
Համայնքներ, 2024թ. սարկելքի դրությամբ Communities, as of the beginning of 2024	5
Քաղաքներ Towns	5
Վյուղեր Villages	93
Բնակչության թվաքանակը 2024թ. սարկելքի դրությամբ Population number as of the beginning of the year, 2024	213.2 հազ. մարդ/ tho. person
այդ թվում՝ including:	
քաղաքային urban	67.6 հազ. մարդ/ tho. person
գյուղական rural	145.6 հազ. մարդ/ tho. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ. % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2023, %	7.1
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ. % Share of urban population size 2023, %	31.7
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	345 083.3 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	81 413.2 հա/ ha

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2023թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.0 %,
- գյուղատնտեսություն 11.6 %,
- շինարարություն 4.6 %,
- մանրածախ առևտուր 2.1 %,
- ծառայություններ 0.8 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Մարզը հանդիսանում է ՀՀ-ում թարմ ձկան հիմնական մատակարարը: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սևան խոշորացված համայնքի՝ Գեղամավան գյուղական բանակավայրի վարչական տարածքներում:

Ք. Սևան. գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին՝ լճից 200-250մ հեռավորության, ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա: Սևան քաղաքը Երևանից գտնվում է 66կմ հեռավորության վրա:

Սևան քաղաքը 2024թ. տարեկազմին կազմում է 18.9 հազ. մարդ: Տնտեսության առաջատար ոլորտը և բնակչության հիմնական զբաղվածության ուղղությունը՝ զբոսաշրջությունն է: Բնակչության որոշ մասը զբաղված է կրթության, մշակույթի, ծառայությունների մատուցման ոլորտներում:

Քաղաքի զարգացման հիմնական ուղղությունը թեթև արդյունաբերությունը և զբոսաշրջությունն է: Սևան համայնքը զբաղեցնում է 1784.68հա հողատարածք: Ռելիեֆը հիմնականում հարթ է, կտրտված հեղեղատներով, ունի գրունտային ջրերի բարձր մակարդակ: Տարածված են թույլ անկայուն լճային կարբոնատային ավազները, կավեր, ավազակավեր, խճեր:

Կլիման մեղմ է, բարձր լեռնային՝ չափավոր տաք ամառ և չափավոր սառը, քամոտ ձմեռ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է $-12,5^{\circ}\text{C}$, հուլիսին՝ $+22,5^{\circ}\text{C}$: Տարվա ընթացքում գերիշխում են հյուսիսային, հարավ-արևմտյան և արևմտյան ուղղության քամիները: Քաղաքի օդային ավազան արտանետումների հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, ջեռուցման համակարգերը: Մարզը գազիֆիկացված է:

10. Նախատեսվող գործունեության բնութագիրը, հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները.

Գործունեության տարածքում ճեմուղու կառուցումն ընդգրկում է Սևանի թերակղզու տարածքի մոտ 2,8 կմ երկարությամբ հատվածը, որն անցնում է թերակղզու հարավային մերձափնյա գոտու երկայնքով, լճի ջրի եզրից 12-ից մինչև 100 մ հեռավորության վրա: Ճեմուղին սկիզբ է առնելու «Մալիբու» հանգստյան գոտու տարածքից (պլ0+980) և մեղմ կորագծով, կրկնելով լճափի կորությունն, անցնում է հարթ տարածքով մինչև վերջ՝ 2+363 պիկետը: Ամբողջ երկարությամբ ծրագիծը հատում է բազմաթիվ հանգստյան գոտիներ՝ բազմաբնույթ կառույցներով, անտառապատ հատվածներով:

Նախագծային աշխատանքներն իրականացվել են համաձայն գործող նորմերի:

Նախագծում ընդունված են ա/ճ պարամետրերը (ըստ առաջադրանքի՝)

- Հողային պաստառի լայնությունը՝ 6.5-7.5մ,
- Երթևեկային/ճեմելու մասի լայնությունը՝ 6.5մ,

Հիմնվելով գեոդեզիական ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա, նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

- Հողային պաստառի իրականացում:
- Ջրահեռացման համակարգի կառուցում (ե/բ վաքեր):
- Ճանապարհային պատվածքի իրականացում:
- Ճանապարհի կահավորում (իջատեղեր, աստիճաններ, թեքահարթակներ):
- Հենապատերի (գաբիոնե) կառուցում:

Ճեմուղու կոնստրուկցիայի մշակման ընթացքում հաշվի է առնվել արտակարգ իրավիճակներում ճանապարհի պատվածքի կրողունակությունը շտապ օգնության մեքենայի դիպվածային մոտեցման հնարավորությունը:

10.1 Շահագործման փուլ.

Տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները:

Ճեմուղի նախատեսվում է ճանապարհների կառուցում ափի երկայնական հատվածով՝ 1902-ից մինչև 1902-5 նիշը: Միջին բարձրությունը հողի աշխատանքային նիշից կազմի մոտ 0.5 մ: Որոշ հատվածներում ներգծվել են կորեր և ծրագծի՝ նշված չափորոշիչներից տատանվող հատվածներ՝ որոշ հատվածներում ջրահեռացման ավելի արդյունավետ կազմակերպման համար:

Նախագծվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 2.8կմ :

Ճեմուղին ունենալու է հետիոտնային և հեծանվային ուղի: Ճեմուղու կառուցումը կատարվելու է 10*20սմ բազալտե եզրաքարերով՝ h=15սմ խճային հիմքով: Իսկ Ճեմուղու լճին հարող շեպը (աջ կողմում) ամրացվելու է ճիմապատելով՝ 10սմ հաստությամբ շերտով:

Ճանապարհի հատակագիծն անցնում է հիմնականում հանգստի գոտիների կառույցների և լողափի միջև ընկած հատվածով: Որոշ հատվածներում անցնում է արհեստական տնկված անտառածածկ հատվածներով, ինչը հատվածային բնույթ է կրում և գեղատեսիլ դարձնում Ճեմուղուց բացվող տեսարանը: Հատակագծում շրջադարձի անկյունները նշահարված են շրջանային կորերով: Ոլորայնության գործակիցը -0.16:

Երկայնական կտրվածքում կատարվել են փոփոխություններ, ապահովվելով ճանապարհի ավելի արդյունավետ ջրահեռացում և մուտք դեպի հանգստի գոտիներ: Երկայնական կտրվածքում առավելագույն թեքությունները ընտրված են գոյություն ունեցող իրադրության համապատասխան, որպեսզի ապահովվի հանգստի գոտիների մուտքերը:

Իջատեղեր (թեքահարթակներ) և մուտքեր.

Իրականացվող Ճեմուղին հատում է բազմաթիվ իջատեղեր, և մուտքեր՝ հանգստի գոտիներից դեպի Ճեմուղի և լողափ, ինչպես նաև բուն Ճեմուղուց դեպի լողափ: Հատող իջատեղերում և մուտքերում նախատեսված է իրականացնել պատվածք 79.2զծ.մ: Այդ հատվածներում նախատեսվում է ապահովել ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմեր պահանջները: Իջատեղերում և մուտքերում ճանապարհային պատվածքը նախատեսված է իրականացնել հետևյալ կառուցվածքով.

• I շերտ- Հատիկավոր ենթահիմք (Ավազակոպճային շերտ), h=12սմ, 722,2մ²:

• II շերտ- խճավազային հիմք, h=15սմ, 648.0մ²:

• III շերտ- Բ տիպի II մակնիշի Խիտ մանրահատիկ ա/բ h=5սմ, 648.0մ²:

Իջատեղերի պատվածքը շրջապատված է աջ և ձախ կողմերից 10x20սմ չափի 288զծ.մ երկարության եզրաշարով:

Իջատեղերի պատվածքի ընդհանուր մակերեսը կազմում է 648.0մ²:

Ճանապարհային պատվածք.

Ճանապարհային վերակառուցման համար նախատեսված իրականացնել մեկ տիպով, հետևյալ կառուցվածքով.

• I շերտ- բնական քարե (բազալտ) պատվածք h=7սմ,

• II շերտ- ցեմենտավազե չոր խառնուրդ (30/70 հարաբերությամբ), h=3սմ:

• III շերտ- գեղցանց

• IV շերտ- Խճավազային հիմք, h=20սմ,

• V շերտ, ավազակոպճային շերտ, h=10սմ

• VI շերտ, գետտեքստիլ

Բազալտե քարերը շարվելու են իրարից 1սմ հեռավորությամբ, իսկ այդ 1սմ լայնությամբ բացակները լցվելու են մանրահատիկ ավազով:

Գաբիոնային հենապատեր. ԿՄ0+889 – ԿՄ0+929 (ԿՄ0+000-ԿՄ0+040)՝ ճեմուղուց աջ, ԿՄ0+940 – ԿՄ0+955 (ԿՄ0+000-ԿՄ0+015)՝ ճեմուղուց ձախ, ԿՄ1+447 – ԿՄ1+517 (ԿՄ0+000- ԿՄ0+070)՝ ճեմուղուց աջ, ԿՄ1+464 – ԿՄ1+496 (ԿՄ0+000-ԿՄ0+032)՝ ճեմուղուց ձախ, ԿՄ1+998.32 – ԿՄ2+140.32 (ԿՄ0+0.000-ԿՄ0+142)՝ ճեմուղուց աջ, ԿՄ2+154.85 – ԿՄ2+219.85 (ԿՄ0+0.000-ԿՄ0+065)՝ ճեմուղուց աջ հատվածներում, նախատեսված են գաբիոնային հենապատեր համապատասխանաբար՝ 40.0զծ.մ, 15.0զծ.մ, 70.0զծ.մ, 32.0զծ.մ , 142.0զծ.մ և 65.0զծ.մ երկարություններով:

Այդ հատվածում լիցքի բարձրությունը բարձր է ստացվում և գրունտային շեյ նպատակահարմար չէ իրականացնել, քանի որ ջրի մակարդակի 1902.0մ նիշին հասնելուց հետո հողային պաստառի կայունությունը ապահովվելու համար:

Գաբիոնային բլոկների չափերն են 1.0x1.0x0.5մ: Գաբիոնային հենապատերի շարքերի քանակը տատանվում է 1-ից մինչև 5 շարք: Գաբիոնային բլոկի հիմնակմախքը (Կարկաս) բաղկացած է 6.5 մ տրամագծով լարով:

Գաբիոնի ցանցը ամրակով $d=3.0$ մմ (4.0 մ/), որոնք միմյանց հետ և գաբիոնի հիմնակմախքի հետ ամրանում են $d=3.0$ մմ մետաղալարով:

Ընդհանուր անհրաժեշտ է կառուցել 1003 հատ 1.0x1.0x0.5մ չափի գաբիոններ, որոնց մեջ անհրաժեշտ է լցնել 501.5խմ ծավալով քարեր, որոնց տրամագիծը չպետք է մեծ լինեն 30սմ-ը:

Ջրահեռացում.

Իրականավող ճեմուղու ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել 25x27սմ ե/բ վաքերի միջոցով: Վաքերը ծածկվելու են թուջե ճաղավանդակով (330 x600):

Ճեմուղու ձախ կողմում ՊԿ0+000 – ՊԿ2+384.62-ը՝ 2384.62 զծ.մ երկարությամբ տեղադրվելու է 25x27սմ ե/բ վաք, ընդհանուր 795 հատ 3 մետրանոց հատվածներով:

Նախատեսված ե/բ վաքերը ոչ ստանդարտ չափերի են, դրանք անհրաժեշտ է պատվիրել ե/բ կոնստրուկցիաների գործարանում:

Ե/բ վաքերի պատրաստման երկարությունը պետք է լինի 2980մմ չափի, որպեսզի միմյանց կողք տեղադրելուց հետո օգտակար երկարությունը կազմի 3000մմ:

Ե/բ ջրահեռացման վաքերից անձրևաջրերը հեռացնելու համար 14 տեղ նախատեսված է կառուցել անձրևընդունիչ դիդահորեր, որոնցից ջրերը հեռանալու են ճեմուղու պատվածքի տակից 300մմ տրամագծով կոյուղու պոլիէթիլային խողովակների միջոցով (SN4):

Կոյուղու պոլիէթիլային խողովակի վերջնամասում նախատեսված է կառուցել գլխադիրներ միաձույլ B15 դասի բետոնից (90x80x30սմ) :

Լուսավորություն. Ճեմուղին ապահովված է լինելու արտաքին լուսավորությամբ: Տեղադրվելու են 140 հատ այլումինե հենապուսներ՝ լուսադիտային լամպերով, 1394 հատ հատակին տեղադրվող լուսատուներ: Լուսավորման համար նախատեսվում է 1480զմ և 1500զմ երկարության մալուխի տեղադրում, որը լինելու է ստորգետնյա, անցկացվելու է PVC վինիլալաստե կոշտ խողովակով՝ ավազե անկողնով:

Համայնապատկերային վերելակը նախատեսվում է թերակղզու հարավային լանջին վերելակի տեղադրում՝ գրողների հանգստյան տան ճաշասրահից արևմուտք ընկած հատվածում:

Դեպի համայնապատկերային վերելակ առկա է հիմնական ճանապարհից մոտեցում՝ 4.5 մ լայնությամբ: Վերելակը նախատեսվում է դեպի թերակղզի և վանական համալիր առավել կարճ, հարմարավետ հասանելիություն ապահովելու համար՝ բնակչության բոլոր խմբերի (սակավաշարժուն, հաշմանդամություն ունեցող), ինչպես նաև գուտ զբոսաշրջային նպատակներով՝ դեպի Սևանա լիճ բացվող գեղատեսիլ

համայնապատկերն ընկալելու նպատակով: Վերելակի ստորին նիշում՝ հիմքային հատվածում, կրճատելու համար վերելակի 45 մ բարձրությունը և կայունացնելու կառույցը նախատեսված է 2 հարկի բարձրությամբ լրացուցիչ շինություն, որում կգետեղվեն մի շարք սենքեր՝ տվյալ տիպի կառույցի սպասարկումն առավել դյուրին կազմակերպելու նպատակով, այն է.

- տոմսերի վաճառակետ
- տեղեկատվական կետ
- սանհանգույցներ
- սրճարան:

Շինությունը նախատեսված է կառուցել թեթև կոնստրուկցիաներով՝ մասնակի օգտագործելով տեղական շինանյութեր (քար) ինտեգրելով կառույցը մոտակա ժայռերին: Շինության տանիքը նախատեսվում է իրականացնել հարթ:

Վերելակի դեպի դուրս հատվածը նախատեսված է թափանցիկ նյութերից, ինչը հնարավորություն կստեղծի մոտ 1 րոպե տևողությամբ վերելքի ողջ ընթացքում վայելել Մևանա լճի տեսարանը: Վերելակային հորի երեք կողմնակատային հատվածները նախատեսված են միաձույլ երկաթբետոնից՝ բնական քարե երեսապատմամբ: Կղզուց դեպի համայնապատկերային վերելակ նախատեսված է մետաղական կոնստրուկցիայով իրականացված կամրջային անցում: Անցումը նախատեսված է մետաղական ֆերմաներից՝ տախտակամածային պոլիմերային փայտե երեսապատմամբ: Կամրջի միջնամասի հատվածում 2 մետր լայնությամբ շերտը նախատեսված է իրականացնել թափանցիկ նյութով, որը կստեղծի էսքորեամալ զգացողություններ այդ հատվածով անցնողների համար:

Շինության տեխնիկական ցուցանիշները.

Շինության կառուցապատման մակերեսը՝ 345.98քմ,

Շինարարական մակերեսը՝ 994.77քմ,

Բարձրությունը 45մ,

Առաջին հարկում նախատեսվում է նախամուտք/անցակետ, վերելակային նախասրահ, սանհանգույցներ, երկրորդ հարկում նախատեսվում է սրճարան՝ մոտ 100 անձի համար:

Նախատեսվում է երկու վերելակ, յուրաքանչյուրը նախատեսված է 25 անձի համար:

“Մևան” ազգային պարկի համայնապատկերային վերելակի ջեռուցումը և օդափոխությունը իրականացվելու գործող շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀՇՆ IV-12.02.01-04 համաձայն:

Ջեռուցում և հովացում Ռոպես ջերմության և հովացման աղբյուր հանդիսանում են VRF համակարգները:

VRF համակարգերի ընտրությունը արվել ըստ համապատասխան հաշվարկի՝ 28 կվտ հզորությամբ VRF յուրաքանչյուր հարկի համար, որոնց արտաքին բլոկները տեղադրվում են պատին կից:

Ներքին բլոկների խտուցքի խողովակաշարը միացվում են կոյուղու համակարգին:

Օդափոխությունն Համայնապատկերային վերելակի ռեստորանային հարկում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ: Ներածման համակարգի օդի տաքացումն իրականացվում է էլեկտրական տաքացուցիչով: 0,00 նիշի հարկի սանհանգույցներից արտածումն իրականացվում է կանալային կենտրոնախույս օդամուղի միջոցով:

Օդափոխության համար օգտագործվել են "REMAK" ֆիրմայի կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորվող ճաղավանդակների միջոցով: Օդափոխության համակարգերի օդատարերը ջերմամեկուսացվում են: Աստիճանավանդակում իրականացված է օդի դիմհար՝ ՕԴ1 համակարգ:

Լուսավորություն Լուսավորության հաշվարկը իրականացված է Հայաստանում գործող ՀՀՇՆ 22-03-2017 նորմերի: Լուսավորությունը իրականացվելու է լուսադիոդային LED լուսատուներով:

Ջրամատակարարում, ջրահեռացում: Կառուցվող շենքի նախագծի ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի մասը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետա շինարարական գծագրերի ,գործող շինարարական նորմերի և կանոնների,

-ՀՀՇՆ 40-01.01-2014 «Ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցեր», ինչպես նաև ՎԵՈՒԻԱ ՓԲԸ-ի կողմից տրված տեխպայմանի:

Ջրամատակարարում և Կոյուղի մասի նախագծում նախատեսվում են ներքին հետևյալ համակարգերը՝
ա. խմելու տնտեսական սառը ջրամատակարարում

բ. կենցաղային կեղտաջրերի կոյուղի

Նախագծային լուծումները ընդունված են համաձայն ՇՀՈՒ 2.04.01-85 ; ՀՀՇՆ 40-01 01-2014

Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն ՇՀՈՒ 3.05.01-85

Խմելու-տնտեսական- Համակարգը նախատեսված է շենքի խմելու, տնտեսական կարիքների համար: Ջրի մուտքը նախատեսվում է քաղաքային ջրմուղի տնտեսական հակահրդեհային ցանցից, մեկ մուտքագծով:

Մրճարանի տաք ջրամատակարարման համար տեղադրված է 10լ տարողության ծավալային

էլեկտրական ջրատաքացուցիչ: Մարքավորումների միացումը կատարվում է պոլիպրոպիլենե խողովակներով

d=15 -20մմ: Համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կոյուղու համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել D 50մմ D 110մմ կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) լայնակավոր ՅՁ 21-26-100-80 խողովակներից:

Մաքրման կայան նախատեսվում է տեղադրել ռուսական արտադրության Եվրոլոս տիպի համապատասխան հզորության կամ կարող է տեղադրվել նաև կեղտաջրերի նույնատիպ մաքրման այլ տեսակի մաքրման կայան: Կայանը տեղադրվելու է՝ 1905 նիշից բարձր:

10.2 Շինարարության փուլ:

Շինհրապարակ. Մինչև շինարարական աշխատանքների սկսվելը անհրաժեշտ կատարել շինարարական հրապարակի (ուղեգծի) հատկացումը, շինարարական հրապարակի անհրաժեշտ ցանկապատումը, մոտեցման ճանապարհների կառուցումը, պահեստային տնտեսության ստեղծումը և շինարարության կարիքների համար անհրաժեշտ ծավալի կենցաղային նշանակության ու կոմունալ տնտեսության շինությունների նախապատրաստումը:

Ցանկապատի առավել տեսանելի տեղամասում տեղադրել պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալները /անվանում, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար/, ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների մասին տեղեկատվություն պարունակող վահանակներ:

Նախքան կառուցապատումը տարածքում կատարվելու են քանդման և ապամոնտաժման աշխատանքներ, մասնավորապես.

- տարածքում առկա 668.60զծմ ծավալի մետաղական ցանկապատեր, ճաղաշարերի ապամոնտաժում,

- 140.0տն տարաբնույթ աղբի տեղափոխում,

- 1609.7մ² բետոնե սալերի և 2045.72մ² բետոնե հարթակների, 60.60մ³ ցանկապատերի տակ բետոնե գոտիների քանդում,

- 3444մ² մակերեսով ասֆալտբետոնե շերտի քանդում

- 413.28մ³ խճային նախաշերտի քանդում

- 1700.67մ³ քարե շինությունների քանդում

- 1649.60մ² մակերեսով փայտե տաղավարների քանդում

- 63 հատ/116.83տն/ մետաղական շինությունների ապամոնտաժում,

- 110 հատ /58.75տն/ մետաղական տաղավարների ապամոնտաժում,

- 667.24մ³ Մետաղական շինությունների բետոնե հիմնատակերի քանդում.

- 2.90մ³ բետոնե աստիճանների, 424.14մ³ բետոնե հենապատի քանդում :

Կատարվելու է տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից՝ 24000 հատ: Այնուհետև կատարվելու է 56085.00մ² մակերեսով տարածքի համահարթեցում մեխանիզմներով:

Առաջացող շինարարի ծավալը կազմելու է 9358.01տ, որը տեղափոխվելու է համայնքի համաձայնությամբ աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով: Տեղափոխման վայրը համայնքի կողմից կտրամադրվի շինությունության փուլում:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ

Տարածքում ձևավորվելու է ժամանակավոր շինհրապարակ, որը ենթակա է տեղափոխման, տեղափոխման հեռավորությունը և տեղադրման տեղը որոշվում է տեղում: Շինարարական հրապարակում լինելու են.

- աշխատակազմի սենյակ
- նյութերի պահեստավորման տարածք
- բիոզուգարան
- պահակատուն
- աղբի հավաքման կետ
- հողի կուտակման վայր
- շինտեխնիկայի կայանտեղի
- լուսարձակներ
- հակահրդեհային վահանակ
- մեքենաների անիվների լվացման հարթակ:

Շինհրապարակ մուտն ու ելքը լինելու են մեկ տեղից: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Շինարարության ժամանակ աշխատողների համար նախատեսվող հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած հոսքաջրերն ուղղորդվելու են տարածքում տեղադրված բիոզուգարան: Անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող համապատասխան չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց, շարժական ցանցաթաղանթով: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Շինարարական աշխատանքների ընթացքում պետք է ապահովել հանրային երթևեկությունը տեղամասի հարակից ու տեղամասի սահմաններում գտնվող ճանապարհների վրա: Կապալառուն պետք համագործակցի տեղի ճանապարհային ոստիկանության հետ և ձեռք բերի երթևեկության կազմակերպման պլանի իրականացման համար պահանջվող բոլոր թույլտվությունները: Կապալառուն պարտավոր է լրացնել շինարարական աշխատանքների վարման մատյան:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Օգտագործվելու են, մասնավորապես.

- ասֆալտատեղադրիչ-1 հատ
- ավտոինքնաթափ-3 հատ,
- ավտոզուղրոնատոր-1 հատ,

- էքսկավատոր- 2 հատ,
- բուլդոզեր-2 հատ
- բետոնախառնիչ-1 հատ
- ավտոգրեյդեր-1 հատ
- գլոմներ և այլն:

Լուսավորություն և ջեռուցում. Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին, ուստի լրացուցիչ լուսավորության կարիք չի առաջանալու:

Հողային ռեսուրսներ. նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են լուսավորության հենասյունների, մալուխի անցկացման և այլ հողային աշխատանքներ: Հանվելու է ընդհանուր 2438մ³ հողային զանգված, որից 355,20մ³ ծավալի գրունտը լուսավորության հենասյունների, մալուխի անցկացման աշխատանքներից: Հանվող հողային գրունտն ըստ գրունտի տեսակի.

- 27վ-II գրունտ (1.7 գ/սմ³) – 1390 մ³
- 27վ-II գրունտ (1.8 գ/սմ³) – 145 մ³
- 12-Vբ գրունտ (2.1 գ/սմ³) – 234 մ³
- 28բ-VI գրունտ (2.3 գ/սմ³) – 49 մ³
- 9ա-I կարգ (1.2 գ/սմ³) – 620մ³, որը կավավազային հողաբուսական 0,0 – 0,1 շերտ է.
- խտությունը՝ 1.2 գ/սմ³:
- կարգ ըստ մշակման դժվարության՝ 9ա-I:

Կատարվելու է 6553մ³ լիցք, որը ներառում է հանվող հողային զանգվածը՝ 1818 մ³, բացառությամբ 9ա-I կարգ (1.2 գ/սմ³) կարգի 620մ³ գրունտից, որը ոչ պիտանի է լիցքի համար: Քանի որ լիցքի համար պիտանի հանույթի ծավալները ավելի քիչ են, նախատեսված է լիցքի համար պակասող 4735մ³ գրունտը բերել Լճաշեն բնակավայրից՝ համայնքի համաձայնությամբ: 620մ³ հողային գրունտը/բուսահող/ տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված վայր՝ համայնքի համաձայնությամբ կամ կկուտակվի տեղում, կօգտագործվի տարածքի կանաչապատման նպատակով:

Ջրային ռեսուրսներ. Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Մեքենաների անիվների լվացման նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ անհրաժեշտության: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից՝ համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կամ անձանց կողմից: Պայմանագրում կնշվի տեխնիկական ջրի մատակարարման աղբյուրը: Ջրի մատակարարումը լինելու է ոչ հաճախակի և կարճաժամկետ, քանի որ գործունեության տարածքի հողը խոնավ է:

Ջրահեռացում. Ճեմուղու ջրահեռացումը իրականացվում է 25x27սմ ե/բ վաքերի միջոցով: Վաքերը ծածկվում են թուջե ճաղավանդակով (330 x600):

Ճեմուղու ձախ կողմում ՊԿ0+000 – ՊԿ2+384.62-ը՝ 2384.62 գծ.մ երկարությամբ տեղադրված է 25x27սմ ե/բ վաք, ընդհանուր 795 հատ 3 մետրանոց հատվածներով:

Ե/բ վաքերի պատրաստման երկարությունը պետք է լինի 2980մմ չափի, որպեսզի միմյանց կողք տեղադրելուց հետո օգտակար երկարությունը կազմի 3000մմ:

Ե/բ ջրահեռացման վաքերից անձրևաջրերը հեռացնելու համար 14 տեղ նախատեսված է կառուցել անձրևընդունիչ դիտահորեր, որոնցից ջրերը հեռանալու են ճեմուղու պատվածքի տակից 300մմ տրամագույն կոյուղու պոլիէթիլային խողովակների միջոցով (SN4):

Կոյուղու պոլիէթիլային խողովակի վերջնամասում նախատեսված է կառուցել գլխադիրներ միաձույլ B15 դասի բետոնից /90x80x30սմ/

Թափոններ. շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- տարբեր նյութերի մնացորդներ(ավազ, խիճ, բետոն)՝ շինարարական աղբի տեսքով,
- աղտոտված լաթեր, պարկեր,
- կենցաղային աղբ:

Աղբի տեղափոխումը կատարվելու է համայնքի համաձայնությամբ՝ պայմանագրային հիմունքներով: Տեղափոխման վայրը կճշտվի շինթույլտվության փուլում:

Սոցիալական. շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 34 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Բարեկարգում. կառուցման ավարտից հետո կատարվելու է թափոնների հեռացում, օգտագործված ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում: Կատարվելու է կանաչապատման աշխատանքներ:

10.3 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը ճեմուղու կառուցման աշխատանքները տևելու են 4 ամիս, 104 օր, ըստ ժամանակացույցի, հողային աշխատանքները 2 ամիս:

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՃԻԿ					
<i>Սևանի ազգային պարկի և Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կահոնադրության նախագծի և Հարսնաքարի հագստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ</i>					
ՃԵՄՈՒՂՈՒ, ՀՄԼԳՈՒՅՑՆԵՐԻ ՄՇՄԿՄՍՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ					
N Ը/Կ	Կատարվելից աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	ԱՄԻՍՆԵՐ			
		1	2	3	4
1	2	3	4	5	6
1	Լաքորատոր աշխատանքներ				
2	Հողային աշխատանքներ				
3	Ճեմուղու պատվածք				
5	Մուտքերի կառուցում				
6	Ե/բ վաքեր, անձրևընդունիչներ				
7	Աստիճաններ, թեքահարթակներ				
8	Գաբիոնային հենապատեր				

10.4. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Ջուր: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Շինարարության ընթացքում ջրցան չի նախատեսվում, քանի որ հողային գրունտը խոնավ է: Օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր՝ մեքենաների անիվների լվացման համար: Այն բերվելու է ավտոգիստեռնով, լցվելու է նախատեսված շարժական պլաստմասե բաքի մեջ: Տեխնիկական որակի ջուրը մատակարարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարության փուլում Կապակառու կազմակերպությունը կկնքի տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիր, որտեղ կհստակեցվի տեխնիկական ջրի մատակարարման աղբյուրը:

Բուն շինարարական աշխատանքները տևելու են 4 ամիս կամ 104 օր: Շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 34 աշխատակից:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\text{Է.ձ.}} = (n \times N + n1 \times N1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 30 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 104օր:

$W_{\text{խ.տ.}} = (4 \times 0.016 + 30 \times 0.025) \times 104 = 84,6 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,8 \text{ մ}^3/\text{օր:}$

Անիվների լվացման համար Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է 2-3 հատ, օրը 1 անգամ հաճախականությամբ տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 1 = 0.8 \text{ ր/վրկ}$$

Կեղտաջրեր. Շինարարության փուլում կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է շարժական բիոգուգարանի տեղադրում, որի սպասարկումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

Շահագործման փուլում նախատեսվում է կեղտաջրերի հեռացման համար տեղադրել ռուսական արտադրության Եվրոլոս /Евролос Экопром 200/ տիպի համապատասխան հզորության մաքրման կայան: Այն անցել է Ռուսաստանի հանրապետության Առողջապահության նախարարության փորձաքննությունը և սերտիֆիկացված է ՌՖ Պետստանդարտի կողմից: Կարող է տեղադրվել նաև կեղտաջրերի նույնատիպ այլ տեսակի մաքրման կայան, որը կապահովի կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%:



Այս տիպի մաքրման կայանն ունի 2.7մ բարձրություն, 13,5մ երկարություն, 2.2մ լայնություն, ապահովում է օրը 40մ³/օր կեղտաջրերի մաքրում:

Կատարում է.

- ✓ կեղտաջրերի մեխանիկական մաքրում:
- ✓ Կենսաբանական մաքրում անաէրոբ պայմաններում:
- ✓ Կենսաբանական մաքրում աէրոբ պայմաններում:
- ✓ Տիղմի և մաքրված ջրի առանձնացում:
- ✓ Աերոբիկ մշակում:
- ✓ Մեռած բիոթաղանթի պահպանում:
- ✓ Մաքրված կեղտաջրերի ախտահանում և հեռացում:
- ✓ Տիղմի անաէրոբ կայունացում:

Գործողության ընթացքում արտադրանքը որևէ տեղում հոսում չի արձակվում, քանի որ աշխատանքային ռեժիմում գերակշռում են աերոբիկ գործընթացները, ինչը թույլ է տալիս այն տեղադրել բնակելի շենքերի մոտ:

Կենցաղային հոսքաջրերը կոյուղու պոլիէթիլենային, պոլիպրոպիլենե խողովակներով ինքնահոս հեռացվելու է դեպի մաքրման կայան:

Մաքրման կայանի հզորությունը պետք է հաշվարկվի, ելնելով զբոսաշրջիկների և աշխատողների առավելագույն քանակից: Մաքրման կայանի նախագիծը գտնվում է մշակման փուլում, որի ընթացքում կհստակեցվի կեղտաջրերի առավելագույն հոսքը, որի հիման վրա կընտրվի մաքրման կայանի հզորությունը:

Մաքրման կայանից դուրս եկող մաքրված հոսքաջրերը բացարձակապես անվտանգ են շրջակա միջավայրի համար և կարող են օգտագործվել հարակից կանաչ տարածքների ռոռզման նպատակով:

Մաքրման կայանի աշխատանքի արդյունքում կայանի օդափոխման բաքում առաջանում է ակտիվացված տիղմ, որը կառուցվածքով շատ նման է գետի տիղմին և արժեքավոր պարարտանյութ է: Կուտակված չեզոք տիղմը, որը բաղկացած է անօրգանական

միացություններից (մասնավորապես նիտրատներից և ածխաթթու գազից) պարբերաբար հեռացվում է համապատասխան մասնագիտական ծառայությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով:

10.5. Օգտագործվող նյութեր.

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- բետոն, բետոնասալեր
- գաբիոն
- բազալտե սալիկներ
- խիճ, ցեմենտ
- ամրան և այլն

Ճեմուղու կառուցման համար օգտագործվելու է B15 դասի բետոնանյութ կամ բերվելու է պատրաստի բետոնասալեր որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում ճեմուղու հիմքերի բետոնացման աշխատանքների ժամանակ: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից :

11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն/շինարարության, շահագործման և փակման փուլեր/.

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի վարչական տարածքի «Սևան»ԱՊ-ի Սևանա լճի առափնյա հատվածը: Ճեմուղու կառուցումն ընդգրկում է Սևանի թերակղզու տարածքի մոտ 2,8 կմ երկարությամբ հատվածը, որն անցնում է թերակղզու հարավային մերձափնյա գոտու երկայնքով, լճի ջրի եզրից 12-ից մինչև 100 մ հեռավորության վրա:

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել են ճեմուղու կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է վեր հանել հնարավոր բոլոր ազդեցությունները, մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային

պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան շինարարության և շահագործման ընթացքում: Նախատեսվող գործունեության տարածքը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Նախքան գործունեության իրականացումը անհրաժեշտ է առաջնորդվել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N205-Ն որոշման, 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման դրույթները: Գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են քանդման, հողային, բետոնապատման, սալիկապատման աշխատանքներ:

Գործունեության տարածքն արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ երկար տարիներ օգտագործվել է որպես հանգսյան գոտի՝ լողափ:

Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Կառուցապատման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը շինարարության և շահագործման փուլերում հիմնականում կապված են՝

- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետումների,
- ջրային և հողային ռեսուրսների օգտագործման,
- կենսաբազմազանության պահպանման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- լանդշաֆտի փոփոխությունների,
- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Շինարարության և շահագործման փուլեր

11.1. Օդային ավազան.

Օդային ավազան ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների և հողային աշխատանքներից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի տեսքով, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով: Սևան քաղաքը 2024թ. տարեսկզբին կազմում է 18.9 հազ. մարդ:

Համաձայն հաշվարկների՝ փոշու անկազմակերպ արտանետումները հավասար են 0,47տ/շին. ժամանակահատված կամ 0,32գ/վրկ:

Արտանետումների հաշվարկը ներկայացված է հավելված 3-ում:

Շինարարության ընթացքում շինարարական տեխնիկայի արտանետումները ներկայացված է աղյուսակում:

Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները.

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /832ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.77	0,18
CH (ածխաջրածիններ)	0,243	0.004	0.001
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	5,45	1,26
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.93	0,215
Օծմբային անեխրիդ		0,01	0,034
Անկազմակերպ փոշու արտանետում		0,32	0,479 / 416ժամում/

Շինարարության փուլում Օդային ավազան արտնետումները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ. ելնելով գործունեության բնույթից, օդային ավազանի և կլիմայի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում, ուստի միջոցառումներ չի նախատեսվում:

11.2 Հողային ռեսուրսներ.

Հողային աշխատանքները կատարվելու են, ելնելով տեղանքի ռելիեֆի պայմաններից և բնահողերի բնութագրից: Հողային աշխատանքների կատարման ժամանակ պահպանվելու է հողային պաստառի կայունությունը, ապահովել կառուցման կանոնների ու ջրահեռացման պահանջների պահպանումը: Տարածքի հողային աշխատանքներն ընդգրկում են.

- Հողային պաստառի լայնությունը՝ 6.5-7.5մ,
- Երթևեկային մասի լայնությունը՝ 6.5 մ,
- Երթևեկելի մասի լայնական թեքությունը ընդունված է 20%օ:

Գործունեության իրականացման արդյունքում հանվելու է. 2438 մ³ հողային զանգված, որից՝

- 27վ-II գրունտ (1.7 գ/ամ³) – 1390 մ³
- 27վ-II գրունտ (1.8 գ/ամ³) – 145 մ³
- 12-Vp գրունտ (2.1 գ/ամ³) – 234 մ³
- 28բ-VI գրունտ (2.3 գ/ամ³) – 49 մ³

• 9ա-I կարգ (1.2 գ/ամ³) – 620 մ³, որը կավավազային հողաբուսական շերտ է:

Կատարվելու է 6553 մ³ լիցք, որը ներառում է հանվող հողային զանգվածը՝ 1818 մ³, բացառությամբ 9ա-I կարգ (1.2 գ/ամ³) կարգի 620մ³ գրունտից, որը ոչ պիտանի է լիցքի համար: Քանի որ լիցքի համար պիտանի հանույթի ծավալները ավելի քիչ են,

նախատեսված է լիցքի համար պակասող 4735 մ³ գրունտը բերվելու է՝ համայնքի համաձայնությամբ:

Տարածքում առկա է 620մ³ ծավալով հողաբուսական շերտ՝ 0,0 – 0,1 կավավազային՝

• խտությունը՝ 1.2 գ/սմ³:

• կարգ ըստ մշակման դժվարության՝ 9ա-1:

620մ³ հողային գրունտը/բուսահող/ տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված վայր կամ օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար: Հաշվետվությունում նախատեսվում են գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցության մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ՝ միայն շինարարության փուլում:

11.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեությունն իրականացվելու է Սևանա լճի ափին: Ճեմուղին տեղակայվելու է Սևանի լճի եզրից 12-ից մինչև 100մ հեռավորության վրա: Գործունեությունն իրականացվելու է ցանկապատված տարածքում:

Համաձայն «Հայնախագիծ» ԲԲ ընկերության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքների՝ գործունեության տարածքում 2.1 մ խորությունում հայտնաբերվել է գրունտային ջուր:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով և բալոններով՝ ըստ կարիքի: Տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կկնքվի գործունեության իրականացման շինարարության փուլում՝ համապատասխան լիցենզիա ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, հստակեցնելով ջրի մատակարարման աղբյուրը:

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի շարժական 1 հատ 1x1,5 չափերի բիոզուգարան, որի սպասարկումը շինարարության փուլում կատարվելու է մասնագիտացված ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում, ելնելով գործունեության բնույթից, քանի որ բացի ճեմուղուց այլ ենթակառուցվածքներ կամ շինությունների կառուցում չեն նախատեսվում:

11.4 Կենսաբազմազանություն.

Գործունեության տարածքում կան անտառապատ հատվածներ, որոնց մի մասը գտնվում է 1903.5 նիշից ցածր: Ծառերի քանակները և տեսակները կճշտվեն շինարարության ընթացքում: Հին ծառերը կկտրվեն, իսկ արժեքավոր ծառատեսակները կտեղափոխվեն և կտնկվեն 1903,5 նիշից բարձր հատվածներում: 1903.5 մ նիշից ցածր հատվածներում, ջրի բարձրացմանը բոլոր ծառերը, թփերը համաձայն՝ ՀՀ կառավարության որոշման ենթակա են կտրման:

Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, քանի որ գործունեության ենթակա տարածքներն արդեն ենթարկվել են մարդածին ազդեցությանը՝ օգտագործվել է որպես հանգստան գոտի:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով հնարավոր է անտառային հատվածներից որոշ կենդանատեսակներ հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

Գործունեության իրականացումը Սևանա լճի կենսաբազմազանության վրա անմիջական ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներն իրականացվելու են լճի ջրի եզրից 12-ից մինչև 100 մ հեռավորության վրա:

Կազմակերպվելու է շարժական շինհրապարակ, որը ժամանակավոր ցանկապատվելու է, ինչը կկանխարգելի արտահոսքերը դեպի Սևանա լիճ:

Շահագործման փուլում՝ կենսաբազմազանության վրա ազդեցություն չի նախատեսվում, այլ հակառակը նոր տնկված ծառերը և կանաչ զագոնապատ տարածքները հնարավորություն կստեղծեն կենսաբազմազանության զարգացման համար:

Հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված կենսաբազմազանության պահպանությանը:

11.5 Թափոններ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի և կենցաղային ադրի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են 3-5-րդ դասերին:

Առաջանալու է.

- Ծեփերի քանդումից առաջացած շինարարական ադր ծածկագիր(ծածկագիր՝ 91200601 01 00 4, 4 դաս)՝ 9358մ³
- Յուղոտված լաթեր (ծածկագիր՝ 58200600 01 01 4, 4-րդ դաս) 2կգ/տարի: Լինում են կտորների, ձեռնոցների տեսքով, դյուրավառ են:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 5-րդ դաս, 620մ³: Ավելցուկային հող է, որը չի օգտագործվելու է շինարարության ընթացքում, համապատասխանում է 5-րդ կետում նկարագրված հողի կազմությանը:
- «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված ադր /բացառությամբ խոշոր եզրաչափերի/՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4, 4-րդ դաս) 3960կգ/տարի քանակով: Կենցաղային ադրը չի տեսակավորվում, կարող են ներառել տարբեր տեսակի թափոններ:
- Առաջանալու են տարբեր տեսակի մետաղների մնացորդներ՝ կտորների տեսքով

սև մետաղներ պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131200 01 995)՝ մոտ 20կգ, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)՝ մոտ 12կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝ 8կգ թափոնների տեսքով: Սև մետաղները հիմնականում երկաթի պարունակությամբ, ջերմակայուն են: Պղինձը կարմրավուն երանգի պղնձի պարունակության, հալվում է բարձր ջերմաստիճանում: Այլումե թափոնները արձաթափայլ, թեթեև մետաղ է, հալվում բարձր ջերմաստիճանում:

Քանդման արդյունքում առաջացող շինադրը պարունակելու է տարբեր տեսակի թափոններ՝ քարի, ավազի մնացորդներ, դուռ, պատուհան, փայտ, մետաղական մնացորդներ: Թափոնները կտեսկավորվեն, կառանձնացվեն: Օգտակար թափոնները կհանձնվեն սեփականատերերին կամ վարձակալներին, իսկ մնացած թափոնները կհանձնվեն մասնագիտացված կազմակերպություններին կամ կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է/ըստ ամենածանրաբեռնված հերթափոխի/, հետևաբար,

$$M=33*120=3960\text{կգ/տարի}$$

Շինարարական աշխատանքները տնելու են ավելի քիչ՝ 4 ամիս , հետևաբար աղբի քանակը զգակիրեն քիչ կլինի՝ 4 ամսում մոտ 1320կգ կամ 12.7 կգ/օր :

Շահագործման փուլ. տեղադրվելու են 100 հատ մետաղական աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

Շահագործման փուլում առաջանալու է նաև մաքրման կայանում կեղտաջրերի մաքրումից առաջացող տիղմ: Համաձայն բնապահպանության նախարարի 2006թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» 342-Ն հրամանի.

- Ակտիվ տիղմ, հանքայնացված նստվածք, մաքրող սարքավորումների ավազ /ծածկագիրը՝ 94800500 04 00 4, 4-րդ դաս / 7կգ/տարի:

Տիղմի մաքրումը կատարվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ տեղափոխելով աղբավայր: Տիղմի քանակի գնահատում այս փուլում չի կատարվել, քանի որ մաքրման կայանի նաժազիծը գտնվում է մշակման փուլում:

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության ոլորտում լիազորված պետական մարմինը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

Գործունեությունն իրականացվում է «Սևան»ԱՊ-ի տարածքում, Սևանա լճի ափին՝ ռեկրեացիոն գոտում: Տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները:

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

11.7 Աղմուկ և թրթռում.

Ներկայացվող տարածքում աղմուկի և տատանումների մակարդակը շատ ցածր է, քանի որ գտնվում է հանգստյան գոտում: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Գործունեության ընթացքում աղմուկ առաջացնող շինտեխնիկայի օգտագործումը սահմանափակ է: Շինարարական աշխատանքները կատարվելու են մինչև ակտիվ հանգստյան ժամանակաշրջանի սկսվելը, որպեսզի չխանգարեն մոտակա հանգստյան տներում հանգստացողներին: Բացի այդ գործունեությունն իրականացվելու է Սևանա լճի ափամերձ հատվածում, ջրի ալիքները, ձայնը կխոչընդոտեն աղմուկի տարածմանը:

Հաշվարկների հիման վրա կարելի է եզրակացնել, որ հանգստյան գոտիների հարակից տարածքի համար 55 դԲԱ թույլատրելի չափի դեպքում շինարարական աշխատանքների աղմուկի առավելագույն մակարդակը (38 դԲԱ) գտնվում է թույլատրելի նորմայի սահմաններում: Հավելված 4

Շահագործման փուլում աղմուկի ազդեցություն չունի, ելնելով գործունեության բնույթից:

11.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում,փոթորիկ),
- հեղուկ նյութերի արտահոսքի, հրդեհների առաջացման,

• աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:
Համաձայն կատարված «Հայնախագիծ»ԲԲԸ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթները բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը բացակայում են, ելնելով գործունեության բնույթից: Ուստի բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

11.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը./Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն/.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված հետևյալ ռիսկերի հետ.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող նյութերի, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ, որից խուսափելու համար անհրաժեշտ է աշխատանքի ճիշտ կամակերպում և աշխատանքի ընթացքում անվտանգության պահպանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ: Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) պատճառով:

Շինարարության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը:

11.10 Սոցիալական.

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 34 մարդու համար, որից 30

բանվորներ, 4-ը՝ ինժեներա-տեխնիկական անձնակազմ:

Կառուցումը ենթադրում է որոշակի սոցիալական ազդեցություններ.

- Գործունեության իրականացումը կից գտնվող հանգստյան տների սեփականատերերի, վարձակալների, տնտեսվարողների հողային տարածքների ձեռք բերման հետ,
 - հողերի օտարման խնդիրների առաջացում, մեքենաների տեղաշարժի, ճանապարհների հնարավոր խոչընդոտների:
- Դրական սոցիալական ազդեցությունները.
- տարածքում կստեղծվեն նոր՝ արդիական ծառայություններ և ենթակառուցվածքներ,
 - ավելորդ շինություններից ազատվելը կնպաստի Սևանա լճի ափի բարեկարգմանը,
 - տեսողական(վիզուալ)՝ ապահովելով գեղատեսիլ Սևանա լճի գեղագիտական տեսքի ընկալմանը,
 - բնակչության հանգստի պայմանների բարելավմանը :

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, որոշ տեղերում նաև հանգստյան գոտիներից ազդեցությունները կլինեն շատ ցածր:

11.11 Լանդշաֆտ և Բարեկարգում. կանաչապատում.

Գործունեության իրականացումը լանդշաֆտի ծանրաբեռնվածություն և փոփոխություններ չի առաջացնելու: Հակառակը՝ ձեռքազատվելով ավելորդ շինություններից Սևանա լիճը դառնում է ավելի գեղատեսիլ է դարձնում ճեմուղուց բացվող տեսարանը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում: Անցկացվելու է 60.0զծ երկարության մետաղական ճաղաշար: Տեղադրվելու են 80 հատ փայտե նստարարներ, թուջե դեկորատիվ ծառամաններ:

Կանաչապատման գործընթացում կատարվելու է ծառերի թասակների բազալտե եզրաքարերով շարում: Կանաչապատման համար կատարվելու է 1400.00մ² մակերեսի վրա 20սմ բուսահողի փոում և հարթեցում: Կատարվելու է 276,0մ² մակերեսի վրա խոտածածկի սերմի ցանքս՝ ձեռքով: Նախատեսվում է 2700 հատ սամշիթ, 38 հատ հացենի, 37 հատ գիհի վիրգիլյան. 38 հատ թեղի տեսակի ծառերի տնկում: Ծառերը տնկվելու են ճեմուղուն զուգահեռ հատվածներում: Կանաչապատման աշխատանքների կատարման համար նախատեսվում է 3621.5մ² մակերեսի ճմապատում:

Կանաչապատման հատակազիծը գտնվում է մշակման փուլում, որը կներկայացվի «Սևան»ԱՊ-ի համաձայնեցմանը և հաստատմանը:

12.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները
(Բնապահպանական կառավարման պլան)

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են լինելու կառուցապատման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության հետ: Միջոցառումները ներառում են շինարարության ընթացքում խախտված հողերի պահպանումը, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման բացառումը, բնական ռեսուրսների կորստի կանխումը, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում մթնոլորտ վնասակար արտանետումների կանխումը, թափոնների կառավարումը, մարդու առողջության և անվտանգության պահպանումը: ՇՄԱԳ հաշվետվությունում բնապահպանական միջոցառումները մոնիթորինգի ծրագիրը ներկայացվում է նաև Բնապահպանական կառավարման պլանով՝ աղյուսակային տեսքով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

Շինարարության և շահագործման փուլեր.

12.1. Օդային ավազան.

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,

- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,

- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

- ցանկապատել շինարարական հրապարակը համապատասխան նախագծի,

- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվաղողերը լվանալ,

- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,

- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,

- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,

- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, իրականացնել ստուգումներ՝ պարբերաբար,
- բացառել թափոնների այրումը բաց տարածքներում,
- փոշեռսիչ և փոշեճնշիչ սարքավորումների կիրառում՝ համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջների:

:

12.2. Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,

- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին,

- ջրային և հողմնային հողատարումից գերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով,

- հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով,

- շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանվելու է շինհրապարակի առանձնացված հատվածում:

- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

12.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շերով),

- հողային աշխատանքների կատարման ընթացքում ջրատար (ջրապարունակ) հորիզոններին հասնելու դեպքում անհրաժեշտ է համապատասխան միջոցառումների կիրառում՝ ստորգետնյա ջրերի անկազմակերպ հոսքը կանխելու համար,
- բացառել Սևանա լճի ափի փոփոխությունները, ջրի որակական կազմի, ափի փոփոխությունները,
- ապահովել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ պահպանել Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակը՝ ջրի որակը, լճի և ափամերձ ցամաքային տարածքների բնական ու արհեստական լանդշաֆտները և կենսաբազմազանությունը,
- ապահովել Սևանա լճի էկոհամակարգի համար սահմանված նորմատիվները, կանխարգելել վնասակար նյութերի արտանետումը Սևանա լիճ,
- Ճեմուղու լճին հարող շեպը (աջ կողմում) ամրացվելու է՝ ճիմապատելով 10սմ հաստությամբ շերտով,
- մեքենաների անիվների լվացման համար կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,
- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,
- բետոնի լցվածությունը պետք է լինի վերահսկելի՝ ճանապարհներին բետոնանյութի արտհոսքը կանխելու նպատակով:

Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի շրջակա միջավայրի աղտոտման կանխարգման նպատակով նախատեսվում է.

- կտեղադրվի 1 հատ 1x1.5 չափերի բիոզուգարան,
- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաշխատանքները կատարել ցանկապատված տարածքում՝ մակերևութային ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունը կանխարգելելու նպատակով:

12.4 Կենսաբազմազանություն.

Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների բուսածածկի մաքրում,

- տարածքի մաքրումը կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից՝ «Սևան» ԱՊ-ի հսկողությամբ,

- բացառել նախագծից դուրս գոյություն ունեցող ծառերի հատումը կամ տեղափոխումը,

- Ծառահումները և մաքրման աշխատանքները կատարվելու են Շրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատված «Սևան ազգային պարկի» կառավարման տարեկան պլանով նախատեսված միջոցառումների համաձայն:

- 1903.5-1905մ նիշը (1.5մ ալիքի ազդեցության գոտին) ծառատեսակների պահպանում,

- ճեմուղու հատվածով անցնող ծառերի տեղափոխումը կամ հատումը կատարել «Սևան»ԱՊ-ի համաձայնությամբ, պահպանելով ծառերի և ծառաթփուտային բուսականությանը հասցվող հնարավոր վնասի կանխարգելման պահանջները, Շահագործման փուլում ապահովել նոր տնկված ծառերի և կանաչ գոտիների խնամքը՝ ծառերի կաչողականությունն ապահովելու և զագոնապատ տարածքները պատշաճ մակարդակով պահպանելու համար:

12.5.Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- կատարել քանդման արդյունքում առաջացող շինադրի տեսակավորում,

- թափոնները տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով, դրանց տեղափոխումը կատարել հատուկ սահմանված երթուղիներով, նախապես հատկացված վայրեր՝ համայնքի համաձայնությամբ,

- խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,

- աղբը կամ այլ թափոնները պետք է հավաքվեն հատուկ հատկացված տարածքում, պարկերի կամ արկղերի մեջ, տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող մասնագիտացված կազմակերպություններին,

- մետաղների մնացորդները տեսակավորել և հանձնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- բացառել թափոնների բաց այրումը շինհրապարկում կամ տարածքից դուրս,

- բացառել թափոնների կուտակումը շինհրապարակից դուրս՝ կից տարածքներում,

- արտակարգ իրավիճակների դեպքում(քամու ուժգնացում, փոթորիկ, ջրհեղեղ և այլ բնական երևույթներ) դադարեցնել շինարարական աշխատանքները:

Շահագործման փուլ.

- տեղադրել համապատասխան տարողության աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ՝ կենցաղային աղբի կուտակման համար,

-տարածքի աղբահանությունը կատարել ռեկրեացիոն գոտու համապատասխան չափանիշներով, կազմակերպել կանոնավոր և տարանջատված աղբահավաքում, տեղադրելով տարբեր կոնտեյներներ՝ մթերքի մնացորդների, պլաստիկե և ապակե տարաների համար:

12.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով:

Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները,
- Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարության
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետազա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին:

Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին: Լիազորված մարմինը կամ նրա մարզային ծառայությունն ապահովում է հայտնաբերված պատմամշակութային արժեքների հետազոտումը և դրանց պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակության բացահայտումը, ինչպես նաև սահմանում է այն միջոցառումները, որոնք պետք է ապահովեն պատմամշակութային արժեքների պահպանությունը:

Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետազա գործողությունները կազմակերպելու համար:

12.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում,

- հանգստի գոտու մոտակայքում աղմուկը պետք է հնարավորինս նվազեցվի,
- փոխադրամիջոցները պետք է զինված լինեն խլացուցիչներով.
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

12.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հրդեհանվտանգության նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային հիդրատներով,
- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին, տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքները կատարելու ընթացքում ապահովել հանրային երթևեկությունը տեղամասի հարակից ու տեղամասի սահմաններում գտնվող ճանապարհների վրա,
- բաց պահել հակահրդեհային միջտարածությունները, մաքրել հրդեհավտանգ թափոններից,
- Կապալառուն պետք համագործակցի տեղի ճանապարհային ոստիկանության հետ և ձեռք բերի երթևեկության կազմակերպման պլանի իրականացման համար պահանջվող բոլոր թույլտվությունները,
- տարերային երևույթների, մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

12.9 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.

Շինարարության փուլում աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- աշխատողների համար հատկացվելու են ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(վագոն տնակ),
- բանվորների աշխատանքի պաշտպանությունը պետք է ապահովվի անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն),
- շին. հրապարակն ապահովված է լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ

դեղարկողիկով,

- տարածքն ապահովել սանիտարա-կենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան,

- ՀՀ կառավարություն 2002թ. հունվարի 24-ի «Մեվանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ հաստատված նյութերի օգտագործման բացառումը:

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, տեղեկատվական, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

-վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված սարքերի կուտակումները,

-վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

-նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շահագործման փուլ.

Նախագծի մշակման ժամանակ հաշվի են առնվել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի լիարժեք կենսագործունեության համար պայմաններ տեղծելու անհրաժեշտությունը, ապահովելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 և ՀՀԿՆ 23- 101-2017 շինարարական նորմերի պահանջները:

-Ճեմուղու նախագծումն իրականացնել, ապահովելով հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար հասանելիություն հարթակներին և լողափին մոտենալու համարմատչելի ուղիներ:

-Ապահովվել է շարժման ուղիների անվտանգությունը և հուսալիությունը:

-Հաշմանդամների կողմից հաճախվող օբյեկտներ տանող ճանապարհին անցուղիները և հետիոտն ճանապարհները համատեղել երթևեկության ուղիների հարաչափերին:

-Անցումները ճեմուղուց դեպի լողափնյա հատված կահավորվել են թեքահարթակներով:

12.10 Սոցիալական.

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 34 մարդ, որոնք աշխատելու են 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,

- ճեմուղին կառուցել հաշվի առնելով քանդվող կամ տեղափոխվող շինությունների սեփականատերերի, վարձակալների իրավական պահանջները,

անհրաժեշտության դեպքում ստանալ տնտեսավարողների համաձայնությունը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն,

- բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը, կից գտնվող հանգստյան գոտիների տարածքների օգտագործումը,

- աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:

Շահագործման փուլ. Սևանա լճի ջրի էկոհամակարգի դրական փոփոխությունը կնպաստի բնակչության առողջական և հանգստի պայմանների բարելավմանը:

12.11 Լանդշաֆտ, բարեկարգում.

Լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել բնական լանդշաֆտները,
- Սևանա լճի բաց լանդշաֆտային տեսարանի ապահովում՝ ազատելով լիճը խանգարող շինություններից,
- պահպանել ջրային ավազանի ափի 10մ անօտարելի շերտը,
- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման աշխատանքները, լանդշաֆտային արհեստական փոփոխությունները,
- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել հնարավորինս բարեկարգ տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:

Կանաչապատում. կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- հնարավորինս պահպանել անտառապատ տարածքներում ծառերը,
- ճեմուղու կառուցմանը խանգարող ծառերի տեղափոխումը կամ հատումը կատարել «Սևան»ԱՊ-ի համաձայնությամբ,
- կանաչապատումը կատարել «Սևան»ԱՊ-ի կողմից հաստատված կանաչապատման նախագծին համապատասխան՝ վերջինիս վերահսկողությամբ:

13. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը (Մոնիթորինգ)։

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված։

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն։
- Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ շինարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման նպատակով։
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով։
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման սկզբում անտառային հատվածներում կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով։
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով։
- Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն։
- Բարեկարգման, կանաչապատման աշխատանքների կատարման ապահովում, վերահսկում։

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն։

14. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Օդային ավազան	<p>Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ 	Կապալառու	Նախաձեռնող «Սևան»ԱՊ

		<p>տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,</p> <ul style="list-style-type: none"> - ցանկապատել շինարարական հրապարակը համապատասխան նախագծի, - շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ, - հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, - գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով, - շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, իրականացնել ստուգումներ՝ պարբերաբար, - բացառել թափոնների այրումը բաց տարածքներում, - փոշեռսիչ և փոշեճնշիչ սարքավորումների կիրառում՝ համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «Շինարարական 		
--	--	--	--	--

		արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջների:		
2	Հողային ռեսուրսներ	<p>Հողային ռեսուրսների ադոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .</p> <p>- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն` ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,</p> <p>- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:</p>	Կապալառու	Նախաձեռնող «Սևան»ԱՊ

		<ul style="list-style-type: none"> - նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին, - ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով, - հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով, - շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանվելու է շինհրապարակի առանձնացված տեղերում: - շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում: 		
3	Ջրային ռեսուրսներ.	Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.	Կապալառու	Նախաձեռնող «Սևան»ԱՊ

<p>- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շշերով),</p> <p>- հողային աշխատանքների կատարման ընթացքում ջրատար (ջրապարունակ) հորիզոններին հասնելու դեպքում անհրաժեշտ է համապատասխան միջոցառումների կիրառում՝ ստորգետնյա ջրերի անկազմակերպ հոսքը կանխելու համար,</p> <p>- բացառել Սևանա լճի ափի փոփոխությունները, ջրի որակական կազմի փոփոխությունները,</p> <p>- ապահովել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ պահպանել Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակը՝ ջրի որակը, լճի և ափամերձ ցամաքային տարածքների բնական ու արհեստական լանդշաֆտները և կենսաբազմազանությունը,</p> <p>- ապահովել Սևանա լճի էկոհամակարգի համար սահմանված նորմատիվները, կանխարգելել վնասակար նյութերի արտանետումը Սևանա լիճ,</p> <p>- ճեմուղու լճին հարող շեպը (աջ կողմում) ամրացվելու է ճիմապատելով 10սմ հաստությամբ շերտով,</p>		
---	--	--

<p>- մեքենաների անիվների լվացման համար կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,</p> <p>- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան,</p> <p>- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,</p> <p>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,</p> <p>- բետոնի լցվածությունը պետք է լինի վերահսկելի՝ ճանապարհների բետոնանյութի արտհոսքը կանխելու նպատակով:</p> <p>Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական</p>		
--	--	--

		<p>հոսքաջերի շրջակա միջավայրի աղտոտման կանխարգման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - կտեղադրվի 1 հատ 1x1.5 չափերի բիոզուգարան, - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, - շինաշխատանքները կատարել ցանկապատված տարածքում՝ մակերևութային ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունը կանխարգելելու նպատակով: <p>Շահագործման փուլում կտեղադրվի կեղտաջրերի մաքրման կայան:</p>		
4	Կենսաբազմազանություն	<p>Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար, - ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների բուսածածկի մաքրում, 	Կապալառու	Նախաձեռնող՝ «Սևան»ԱՊ

		<p>- տարածքի մաքրումը կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից՝ «Սևան» ԱՊ-ի հսկողությամբ,</p> <p>- բացառել նախագծից դուրս գոյություն ունեցող ծառերի հատումը կամ տեղափոխումը,</p> <p>- 1903.5-1905մ նիշը (1.5մ ալիքի ազդեցության գոտին) ծառատեսակների պահպանում,</p> <p>- ճեմուղու հատվածով անցնող ծառերի տեղափոխումը կամ հատումը կատարել «Սևան»ԱՊ-ի համաձայնությամբ, պահպանելով ծառերի և ծառաթփուտային բուսականությանը հասցվող հնարավոր վնասի կանխարգելման պահանջները,</p> <p>Շահագործման փուլում ապահովել նոր տնկված ծառերի և կանաչ գոտիների խնամքը՝ ծառերի կաշոտակալությունն ապահովելու և գազոնապատ տարածքները պատշաճ մակարդակով պահպանելու համար:</p>		
5	Թափոններ.	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- կատարել քանդման արդյունքում առաջացող շինադրի տեսակավորում,</p> <p>- թափոնները տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով, դրանց տեղափոխումը կատարել հատուկ սահմանված</p>	Կապալառու	Նախաձեռնող՝ «Սևան»ԱՊ

<p>երթուղիներով, նախապես հատկացված վայրեր, - խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից, - աղբը կամ այլ թափոնները պետք է հավաքվեն հատուկ հատկացված տարածքում, պարկերի կամ արկղերի մեջ, տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ:</p> <p>- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող, - մետաղների մնացորդները տեսակավորել և հանձնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - բացառել թափոնների բաց այրումը շինհրապարկում կամ տարածքից դուրս, - բացառել թափոնների կուտակումը շինհրապարակից դուրս՝ կից տարածքներում, - արտակարգ իրավիճակների դեպքում/քամու ուժգնացում, փոթորիկ, ջրհեղեղ և այլ բնական երևույթներ/ դադարեցնել շինարարական աշխատանքները:</p> <p>Շահագործման փուլ.</p> <p>- տեղադրել համապատասխան տարողության աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ՝ կենցաղային աղբի կուտակման համար,</p>		
--	--	--

		<p>-տարածքի աղբահանությունը կատարելով ռեկրեացիոն գոտու համապատասխան չափանիշներով, կազմակերպել կանոնավոր և տարանջատված աղբահավաքում, տեղադրելով տարբեր կոնտեյներներ՝ մթերքի մնացորդների, պլաստիկե և ապակե տարաների համար:</p>		
6	Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	<p>Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով: Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.</p> <ul style="list-style-type: none"> • Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները, • Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարության • Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից, • Հայտնաբերված իրերի հետ կապված հետազա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը, • հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական 	Կապալառու	Նախաձեռնող «Մևան»ԱՊ

		<p>աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազորմարմին:</p> <p>Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին: Լիազորված մարմինը կամ նրա մարզային ծառայությունն ապահովում է հայտնաբերված պատմամշակութային արժեքների հետազոտումը և դրանց պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակության բացահայտումը, ինչպես նաև սահմանում է այն միջոցառումները, որոնք պետք է ապահովեն պատմամշակութային արժեքների պահպանությունը:</p> <p>Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:</p>		
--	--	---	--	--

7	Աղմուկ և թրթռում.	<p>Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, - հանգստի գոտու մոտակայքում աղմուկը պետք է հնարավորինս նվազեցվի, - փոխադրամիջոցները պետք է զինված լինեն խլացուցիչներով. - պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները: 	Կապալառու	Նախաձեռնող՝ «Սևան»ԱՊ
8	Արտակարգ իրավիճակներ	<p>Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել հրդեհանվտանգության նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային հիդրատներով, - աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին, տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի 	Կապալառու	Նախաձեռնող՝ «Սևան»ԱՊ

		<p>կապով,</p> <ul style="list-style-type: none"> - հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - շինարարական աշխատանքները կատարելու ընթացքում ապահովել հանրային երթևեկությունը տեղամասի հարակից ու տեղամասի սահմաններում գտնվող ճանապարհների վրա, -բաց պահել հակահրդեհային միջտարածությունները, մաքրել հրդեհավտանգ թափոններից, - Կապալառուն պետք համագործակցի տեղի ճանապարհային ուստիկանության հետ և ձեռք բերի երթևեկության կազմակերպման պլանի իրականացման համար պահանջվող բոլոր թույլտվությունները, - տարերային երևույթների, մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: 		
9	<p>Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն</p>	<p>Շինարարության փուլում աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել ՀՀ օրենսդրությամբ 	Կապալառու	Նախաձեռնող՝ «Սևան»ԱՊ

		<p>պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,</p> <ul style="list-style-type: none"> - աշխատողների համար հատկացվելու են ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(վազոն տնակ), -բանվորների աշխատանքի պաշտպանությունը պետք է ապահովվի անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), -շին. հրապարակն ապահովված է լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, - տարածքն ապահովել սանիտարական կենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին 	
--	--	---	--

<p>համապատասխան,</p> <p>- ՀՀ կառավարություն 2002թ. հունվարի 24-ի «Մևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ հաստատված նյութերի օգտագործման բացառումը:</p> <p>- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, տեղեկատվական, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,</p> <p>- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,</p> <p>-վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված սարքերի կուտակումները,</p> <p>-վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,</p> <p>-նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ ստաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և</p>		
--	--	--

		<p>հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,</p> <ul style="list-style-type: none"> - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: <p>Շահագործման փուլ.</p> <p>Նախագծի մշակման ժամանակ հաշվի են առնվել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի լիարժեք կենսագործունեության համար պայմաններ տեղծելու անհրաժեշտությունը, ապահովելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 և ՀՀԿՆ 23- 101-2017 շինարարական նորմերի պահանջները:</p> <ul style="list-style-type: none"> -Ճեմուղու նախագծումն իրականացնել, ապահովելով հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար հասանելիություն հարթակներին և լողափին մոտենալու համարմատչելի ուղիներ: -Ապահովվել է շարժման ուղիների անվտանգությունը և հուսալիությունը: -Հաշմանդամների կողմից հաճախվող օբյեկտներ տանող ճանապարհին անցուղիները և հետիոտն ճանապարհները համատեղել երթևեկության ուղիների հարաչափերին: -Անցումները ճեմուղուց դեպի լողափնյա հատված կահավորվել են թեքահարթակներով: 		
--	--	--	--	--

10	Սոցիալական	<p>Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 34 մարդ, որոնք աշխատելու են 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:</p> <p>Սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -գործունեության իրականացման համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, -հաշվի առնելով քանդվող կամ տեղափոխվող շինությունների սեփականատերերի, վարձակալների իրավական պահանջները, -անհրաժեշտության դեպքում ստանալ տնտեսվարողների համաձայնությունը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն, -բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը, կից գտնվող հանգստյան գոտիների տարածքների օգտագործումը, -աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, -կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով: <p>Շահագործման փուլ. Սևանա լճի ջրի էկոհամակարգի դրական փոփոխությունը կնպաստի բնակչության առողջական և հանգստի</p>	Կապալառու	Նախաձեռնող՝ «Սևան»ԱՊ
----	------------	--	-----------	----------------------

		պայմանների բարելավմանը:		
11	<p>Լանդշաֆտ, բարեկարգում.</p>	<p>Լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -պահպանել բնական լանդշաֆտները, լճի տեսարանները, -Սևանա լճի բաց լանդշաֆտային տեսարանի ապահովում՝ ազատելով լիճը խանգարող շինություններից, -պահպանել ջրային ավազանի ավի 10մ անօտարելի շերտը, -բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները, - հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները: <p>Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.</p> <ul style="list-style-type: none"> -շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից 	Կապալառու	Նախաձեռնող՝ «Սևան»ԱՊ

		<p>և բերել հնարավորինս նախկին տեսքի, - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվում և հեռացվում են տարածքից, - կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ: Կանաչապատում. կանաչապատման նպատակով նախատեսվում է. -- հնարավորինս պահպանել անտառապատ տարածքներում ծառերը, -- ճեմուղու կառուցմանը խանգարող ծառերի տեղափոխումը կամ հատումը կատարել «Մևան»ԱՊ-ի համաձայնությամբ, -- կանաչապատումը կատարել «Մևան»ԱՊ-ի կողմից հաստատված կանաչապատման նախագծին համապատասխան:</p>		
--	--	---	--	--

15. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)։

Գործողություններ Շինարարության փուլ	Մոնիթորինգի վայրը,	Մոնիթորինգի եղանակը, ձևը	Մոնիթորինգի պարբերականությունը(ժամանակամիջոցը),	Մոնիթորինգի Պատասխանատու Վերահսկող
1.Օդային ավազան արտանետումները մեղմում՝ օդի աղտոտումը կանխելու նպատակով (փոշի, ծխազագեր)	Շինհրապարակում գործունեության և հարակից տարածքներ:	-Տեսողական ուսումնասիրություն, -անհրաժեշտության դեպքում չափումներ՝ համապատասխան մասնագետի կողմից:	Ամենօրյա Շաբաթը 1 անգամ	Կապալառու «Սևան»ԱՊ
2.Ջրային ռեսուրսների՝ Սևանա լճի աղտոտումը բացառելու նպատակով	Պարբերաբար	- ջրի որակական կազմի, ափի փոփոխությունների վերահսկում: - ջրային օրգանիզմների համար բարձր տոքսիկություն ունեցող նյութերի օգտագործումը բացառելուն ուղղված վերահսկման իրականացում:	Գործունեության տարածք:	Կապալառու «Սևան»ԱՊ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին
3.Կենսաբազմազանության	Պարբերաբար	- կտրվող, տեղափոխվող ծառերի հաշվառում, վերահսկում, անհրաժեշտության	Գործունեության տարածք վայր, կանաչ տարածքում:	Կապալառու «Սևան»ԱՊ

		դեպքում՝ համապատասխան մասնագետի ներգրավում:		
5. Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ հողի աղտոտումը կանխելու, բերրի շերտի պահպանման նպատակով	Պարբերաբար	-Տեսողական ուսումնասիրություն, վերահսկողություն	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ, հարակից տարածքներ	Կապալառու «Սևան»ԱՊ
6. Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում, կենցաղային աղբի հեռացում	Չպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին	Ամենօրյա շրջայց	Գործունեության տարածքից, շինհրապարակից:	Կապալառու «Սևան»ԱՊ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին
7. Մարդու առողջության և անվտանգության վերահսկում	Պարբերաբար	-Վերահսկում՝ ՀՀ կառավարություն 2002թ. հունվարի 24-ի N 57 որոշմամբ հաստատված նյութերի օգտագործման բացառումն ապահովելու նպատակով: -Համապատասխան ցուցատախտակների տեղադրում	Գործունեության տարածք, շինարարության ընթացքում:	«Սևան»ԱՊ Կապալառու Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին

<p>8.Տարածքի քարեկարգում. կանաչապատում</p>	<p>Շինարարական աշխատանքներ ի ավարտից հետո պարբերաբար</p>	<p>Նոր տնկվող ծառերի տեսակային կազմի տարածաշրջանի ծառատեսակային կազմի համապատասխանության վերահսկում</p>	<p>Գործունեության տարածք, կանաչապատ տարածքներ:</p>	<p>Կապալառու «Սևան»ԱՊ</p>
<p>Շահագործման փուլ</p>				
<p>Կենսաբազմազանություն</p>	<p>Պարբերաբար</p>	<p>Կանաչ տարածքների հսկողություն ծառերի կաչողականությունն ապահովելու նպատակով</p>	<p>Ճեմուղու երկայնքով</p>	<p>«Սևան»ԱՊ</p>

16. Հանրային քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանարապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Սևան քաղաքի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել նախատեսվող գործունեության վերաբերյալ բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկությունները և դիտողությունները: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հանրային քննարկմանը ներկա էին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալը, Կոմիտեի և այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ, Սևան համայնքի, գործունեություն իրականացնող նախագծային ընկերության ներկայացուցիչները, ազդակիր համայնքի բնակիչներ: Հանրային քննարկմանը ներկայացվել է նախատեսվող գործունեության նախագծային լուծումները, ճեմուղու իրականացման նպատակը, գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները: Գործունեության վերաբերյալ Սևան համայնքի Ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համայնքի կողմից տրված նախնական համաձայնությունը վկայում է, որ գործունեության իրականացումը համահունչ է Սևան համայնքի զարգացման հեռանկարային ծրագրերին:

Հաշվետվությունում ներառվել են հանրային քննարկման ընթացքում տնտեսվարողների և հանրության կողմից բարձրացված բոլոր դիտարկումները և հարցադրումները: Հավելված 7,8:

17.Բողոքների ընթացակարգ

Ընկերությունում կներդրվի բողոքների ուսումնասիրման ընթացակարգ՝ գործունեության իրականացման ընթացքում առաջացած շեղումների՝ օդային ավազան արտանետումների ավելացման, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև սոցիալական խնդիրների առաջացման վերաբերյալ բողոքներին արձագանքելու, շեղումները, դրանց պատճառները բացահայտելու, ժամանակին արձագանքելու և թերությունները վերացնելու նպատակով:

18.Փակման և հետփակման փուլեր. Ելնելով գործունեության բնույթից փակման և հետփակման փուլեր չի նախատեսվում:

Գրականություն

1. Հայաստանի հանրապետության Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման Ռազմավարություն

2. «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի` ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամաններ:

3.ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:

4.ՀՀՇՆ 22-01-2024թ. «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթ:


5. ՀՀՇՆ 31-04.01-2024 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ:

6.2020 թվականի սեպտեմբերի 9-ի «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» 335-Ն հրաման:

7. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք /<https://armstat.am/>:

8.[https:// www.bagramyan.am/Pages/CustomPage/](https://www.bagramyan.am/Pages/CustomPage/):

12.1 (*) քառասունչորսում կրույր, տասը քոի մասնաբաժանում	Համանայն տեխնիկական պայմանի <small>Համանայն-Նորաստիարակական-համակարգային տեխնիկական պայմանի</small>
12.2 (*) էինկղրամառամբարգրում	Համանայն տեխնիկական պայմանի <small>Համանայն-Նորաստիարակական-համակարգային տեխնիկական պայմանի</small>
12.3 (*) զարգանառամբարգրում	-
12.4 (*) էինկղրոնային հայդրոլակցություն մարշառառայ կրույր, (ներառելի զիտանիղդ) սնդարիղդ	-
12.5. թույլ հրահանցին	Համանայն 11 հավանի 11 րո սնդարի 11 րո սնդարի սնդարի սնդարի սնդարի
12.6. աղբահանություն	Համանայն պայմանային
13. Տարանի իմեննային նախադասություն	Համանայն գրքինի կարգի
14. Բարեկարգում	ՍՊՊՊՊ հասկանալի, չարհանալի, հանրային հասկանալի, միջառնակի նրախնայուն շարհանալի, կանխադասին՝ շրտարհանինի ընտրությանը համանայնցինի «Հնաման աղբային պարի» ՊՊՊ-ի հետ
15. Շնաղարանան կրույր	Սնդարիղդի պարհանին ընտրելի, կանխադասին, հանրային հանրային, շրտարհանին, չարհանալի, կանխադասին, շրտարհանին
16. Պաշտպանային կարուցին	Սնդարիղդի կրույրի տեխնիկական ընտրելի, կանխադասին (ներառելի է հաստատան շրտարհան միջառնակի աղբային ընտրելի) (մոնիթորինգային)
17. Հարհանրային պահանցին	Համանայն գրքինի տեխնիկական
18. Հարհանրայինի և ընտրության սակարգարմ հարիի պաշտպանության միջոցառան	Համանայն գրքինի տեխնիկական
19. Շրտարհան միջառնակի պահանցում	Ներառելի շրտարհան միջառնակի աղբային տեխնիկական
20. Շնաղարանան կարհանալի	Համանայն նախադին
21. Սնդարիղդի գրքինի ժամկետը և նախադին միջառնակի միջառնակի	մինչև 01.10.2028թ., նախադին միջառնակի պահանցային նախադին, <small>Համանայն-Նորաստիարակական-համակարգային տեխնիկական պայմանի</small>
Լ Բ Ա Ն Ո Ւ Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Լ Ե Ը	
22. Նախադինի վաստարիի ժրոնային ներառելի պահանցին	Պահանցային համայն (մոնիթորինգային հարհանալի է <small>Սնդարիղդի պահանցային տեխնիկական ընտրելի, կանխադասին, հանրային հանրային, շրտարհանին, չարհանալի, կանխադասին, շրտարհանին</small>
23. Միջառնակի համանայնցում	Նախադինի նախադին է համանայնցում «Հ գրքինի տեխնիկական պահանցային կարգի» <small>Սնդարիղդի պահանցային տեխնիկական ընտրելի, կանխադասին, հանրային հանրային, շրտարհանին, չարհանալի, կանխադասին, շրտարհանին</small>
24. Հարհանրային ընտրելի	Համանայն գրքինի կարգի <small>Սնդարիղդի պահանցային տեխնիկական ընտրելի, կանխադասին, հանրային հանրային, շրտարհանին, չարհանալի, կանխադասին, շրտարհանին</small>



Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում շին.

տեխնիկայի մեքենաների: Հողային աշխատանքները իրականացվում են 2 ամիս:

2 ամիս x 26 օր/ամիս x 8 ժամ/օր = 416 ժամ:

Հաշվարկները կատարված են համաձայն «ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ», Минпромстрой СССР, 1987 մեթոդակարգի հետևյալ բանաձևի.

$Q_{\text{ф.р.}} = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times P6 \times B) \times 10^6 / 3600$ տ/ժամ, որտեղ (նշված մեթոդակարգի արդյունակ 1):

P1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, ընդունվում է 0.05

P2 – 0-50 մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անբոցում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0,

P4- գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4¹

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – հանվող հողային զանգվածը:

Շինարարության ժամանակ հանվող հողի ծավալը կկազմի՝ 2438մ³, հաշվի առնելով հողային զանգվածների միջին տեսակարար կշիռը՝ 4022,7տ:

Ժամում հանվող տեղափոխվող գրունտի քանակը կկազմի՝

4022,7տ : 416 ժամ/շին. ժամանակամիջոց = 9,6 տ/ժամ.:

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի թափման բարձրությունը, 0.6

$Q_{\text{ф.р.}} = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.5 \times 9,6 \times 1.0 \times 0.6 \times 10^6 / 3600 = 0.32$ գ/վրկ, կամ $0,32 : 10^6 \times 416 : 3600 = 0,479$ տ/շին. ժամանակամիջոց

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործում

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում արտանետումները առաջանում են վառելիքի այրման արդյունքում:

Հիմնականում օգտագործվում է դիզելային վառելիք:

Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի² հիման վրա:

Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում դա ներկայացվում է դիզելային վառելիքով:

Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև արդյունակ 1-ում:

Արդյունակ 1. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

²Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը «Core Inventory of Emissions in Europe» (այսուհետ՝ CORINAIR)՝ «Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում» մեթոդաբանության համապատասխան»

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO ₂	CH	SO ₂	CO	N ₂ O	CO ₂ ³	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Շինարարության ընթացքում շահագործվելու են հորատող, հարթեցնող, ինքնաթափ մեքենաներ: Շինարարական տեխնիկան աշխատելու է շինարարության ընթացքում մոտ 4ամիս (104 օր, 832 ժամ):

Հաշվի առնելով ստույգ նախագծային տվյալների բացակայությունը, հաշվարկների համար օգտագործվել են փորձագիտական գնահատականների հիման վրա ընդունված ցուցանիշները, ըստ որոնց դիզելավառելիքի քանակները հետևյալն են ընդունվել.

- շինարարական տեխնիկա՝ 0.08 տ/օր, ընդամենը՝ 0.08 տ/օր x 104 օր = 8,32 տ;

Ընդամենը՝ 8,32 տ:

Արտանետումների հաշվարկները ըստ շահագործվող տեխնիկայի տեսակի բերված են աղյուսակ 2-ում:

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2 \times ks \times b$, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 8,32 տ/շինժամ

$SO_2 = 2 \times 8,32 \times 0.002 = 0.033$ տ/ շին. ժամ /0,01գ/վրկ/:

Աղյուսակ 13. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /832ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.77	0,18
CH (ածխաջրածիններ)	0,243	0.004	0.001
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	5,45	1,26
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.93	0,215
Ծծմբային անհիդրիդ		0,01	0,034
Անկազմակերպ փոշու արտանետում		0,32	0,479 / 416ժամում/

³ Ածխածնի երկօքսիդը, ըստ ՀՀ օրենսդրության, չի հանդիսանում վնասակար նյութ և ենթակա չէ նորմավորման, համապատասխանաբար հետագա հաշվարկներում հաշվի չի առնվել:

Աղմուկի մակարդակի գնահատում

Շինարարական աշխատանքների ընթացքում կարող են առավելագույնը օգտագործվել հետևյալ սարքավորումները՝ էքսկավատոր, բուլդոզեր և բեռնատարներ, որոնք էլ հանդիսանում են աղմուկի հիմնական աղբյուրը: Դրանք օգտագործվում են ոչ թե միաժամանակ, այլ ըստ անհրաժեշտության:

Սարքավորումների աղմուկի բնութագրերը.

-էկսկավատորի տարողություն-0,5մ³ -85-87 դԲԱ

-Բուլդոզեր-73,6 կվտ-90 դԲԱ

-Բեռնատար մեքենաի բեռնվածքի հզորությունը 10 տոննաից ավել-85-90դԲԱ

Բնակելի շենքերի, հանգստյան տների անմիջականորեն հարող տարածքների ձայնի թույլատրելի մակարդակը կազմում է 55 դԲԱ , ըստ ՀՀՇՆ22-04-2014թ. նորմերի:

Աղմուկի մակարդակի նվազեցում			
Անվանումը	Հեռավորությունը	Կանաչապատ գոտի, ջրի առկայություն	Աղմուկի մակարդակը հաշվի առնելով հեռավորությունը և կանաչապատ գոտին
1. Էկսկավատոր	50 մ նվազեցումը 26 դԲԱ-ով	նվազեցումը 26 դԲԱ-ով	87-26-26=35 դԲԱ
2. Բուլդոզեր	50 մ – նվազեցումը 26 դԲԱ-ով	նվազեցումը 26 դԲԱ-ով	90-26-26=38 դԲԱ
3. Բեռնատար	50 մ – նվազեցումը 26 դԲԱ-ով	նվազեցումը 26 դԲԱ-ով	90-26-26=38 դԲԱ

Հաշվարկների հիման վրա կարելի է եզրակացնել, որ հանգստյան գոտիների հարակից տարածքի համար 55 դԲԱ թույլատրելի չափի դեպքում շինարարական աշխատանքների աղմուկի առավելագույն մակարդակը (38 դԲԱ) գտնվում է թույլատրելի նորմայի սահմաններում:

Գրականություն

1. ՀՀ առողջապահության նախարարություն, 6 մարտի 2002թ.ք. Երևան , հրաման N138,

ՀՀՇՆ22-04-2014թ. նորմեր;

2. СНиП II-12-77 , глава 12 Защита от шума, Москва 1978



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք. Սևան, Լափրյան փ. 164, (0261) 4 00 01, sevan.pgh@kankar.am

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ի Յ

17 սեպտեմբերի 2025 թվականի N103-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՐՍՆԱՔԱՐ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏՈՒՑ ՄԻՆԶԵՎ ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ
ՀԱՏՎԱԾԻ՝ 1902.0 - 1902.5 ՆԻՇՈՎ ՃԵՄՈՒՂՈՒ, ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ
ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 28.12.2023թ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշման 1-ին Գլխի 8-րդ և 2-րդ Գլխի 28-րդ կետերով, հաշվի առնելով այն, որ 2025 թվականի սեպտեմբերի 2-ին Սևան համայնքի Սևան քաղաքում «Արխիտոն» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված «Հարսնացար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 1902.0 - 1902.5 նիշով ճեմուղու, Լճաշեն-Սևանի թերակղզի գոտևորման և քաղաքաշինական կանոնադրության նախագծերի վերաբերյալ 1-ին հանրային խումբը, որի վերաբերյալ արվա են համապատասխան արձանագրություն և տեսանկյունագրություն,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Արխիտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Հարսնացար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 1902.0 - 1902.5 նիշով ճեմուղու, Լճաշեն-Սևանի թերակղզի գոտևորման և քաղաքաշինական կանոնադրության նախագծերին՝ հաշվի առնելով հանրային քննարկման մասնակիցների կարծիքը, կատարված առաջարկությունները, առաջարկությունների և հարցադրումների հիման վրա նախագծային փաստաթղթերում լրացումներ կատարելու հանգամանքը, նախատեսվող ծրագրի արդյունքում ակնկալվող գործունեության ուղղվածությունը, տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը, միջավայրի բարելավմանը, զբոսաշրջային իրադրության ավելացմանը միտված քաղաքիչի անկախությունը, քննադատական ներկայացված հիմնավորումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



ԿԱՐՏԱՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱՆ ՂԵՎԱԿԱՆ

Հանրային քննարկման արձանագրություններ, մասնակիցների ցանկ, լուսանկարներ

Արձանագրություն

«Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտնորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի և «Հարմարագար» հազստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 նիշով ճեմնուղու նախագծի հանրային 1-ին լսման

Պատվիրատու՝
 ՀՀ քաղաքաշինության կոմիտե
 Բ. Սևան

Կատարող՝
 «Արխիտոն» ՍՊԸ

02.09.2025 թ.

Քննարկմանը մասնակցում էին.

ՀՀ Սևան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանը, Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատասխանատուներ, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ Ն. Պետրոսյանը, խորհրդական Հ. Հովսեփյանը, նախատեսվող ճեմնուղու տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարողներ, քնակիչներ, ԶԼԼ-ների ներկայացուցիչներ:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
 նախագահի տեղակալ՝

Ն. Պետրոսյանը

Նախագծի հեղինակային խումբ՝

Ռ. Բաբայանը

Բացման խոսքով հանդես եկավ Սևան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանը, ներկայացրեց քննարկման առարկան և խոսքը փոխանցեց քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ տիկին Ն. Պետրոսյանին:

Տիկին Պետրոսյանը ներկայացրեց, որ քաղաքաշինության կոմիտեի համակարգմամբ ներկայումս մշակման փուլում են «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտնորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի և «Հարմարագար» հազստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 նիշով ճեմնուղու նախագծի աշխատանքները, համաձայն որի՝ Սևանա լճի առափնյա հատվածում կստացապատման սահմանագիծ է հանդիսանում 1905 նիշը (1903.5՝ ջրի հեռանկարային մակարդակը և գումարած 1.5 մ՝ այլքի ազդեցության գոտին), սակայն 2008 թ. 1563-Ն որոշման պահանջներով առափել գածը նիշերով առկա է խենեքատրանսպորտային ենթակառուցվածքի անցկացման հնարավորություն:

Ընդհանուր գծերով ներկայացվեց հայեցակարգը, ճեմնուղու իրականացման նպատակը՝ տվյալ առափել այցելելի հատվածում ձևավորել գրամիջ ու քարեկարգ միջավայր, ունենալ հետիոտն զբոսանքների և հեծանվային շարժման համար ուղիներ՝ ծառատնկումներով բաժանարար գոտիով, անհրաժեշտության դեպքում զափոնե հենապատերով և քնակղզույան սակավաշարժուն հատվածի հասանելիություն:

ապահովելու համար նախատեսված թեքահարթակներով: Ծննդու հարաւուայթյունն ապահովելուն միտված նախատեսված է բարձրադիր հատվածից մակերեսային ջրերի հեռացման համար կողային ցրահեռացման առու: Ափին ուղղված հատվածում, ինչպես նաև հեծանվային շափոյի բաժանարարի երկայնցով նախատեսված յուսալորուայթյան համակարգեր՝ յուսալույնների և հատակային յուսալույնների տեսքով: Ծննդին կահալորված կլինի ճարտարապետական փոքր ձևերով (նաւարաններ, աղբարկղներ և այլն): Ծածկը կիրականացւի բնակա քաղնագոյն քարերով: Կոնսոլույնցիան նախատեսվում է այնպիսի կտրվածքով, որ ապահովի նաև արտակարգ իրաւիճակներում շտապ օգնուայթյան մեջնանների հասանելիուայթյունը:

Տնտեսվարողների կողմից արվեցին քաղմայթիվ հարցադրումներ. ընդհանուր առմամբ ողջունելով ճննուդու գաղափարը՝ Սևանա լճի առափնյա հատվածը միջազային ծուլաինյա հանգաւալայրերի նման ենթակաւուոցվածքի ներմոճմամբ նոր որակ հաղորդելու միջոցով, այնուհանդերձ առկա էին մի շարք խնդիրներ, որոնց պատասխաններն ալնկալում էին ստանալ, մասնալորապես՝ ծրագրի իրականացումն այլ հատվածում, որի հաջողուայթյան գրանցման դեպքում շարունակել տվյալ հատվածում: Դիտարկել ճննուդուն հարող հատվածներում ժամանակալոր կաւույցների տեղադրման համար առալել պարզեցված գործընթաց, լիագոր մարմնի կողմից մշակել և տրամադրել ճարտարապետական առումով բարձրածեք ժամանակալոր կաւույցների նախագծեր՝ ճննուդու գաղափարին առալել համահունչ քիներ նախատակով:

Նշվեց, որ տարիներ առաջ ներկայացվել է նախագիծ, որով նախատեսվում էր ճննուդու իրականացում թույլատրելի՝ 1905 նիշի վրա և դրանից վերն ընկած հատվածում արդեն՝ զարգացման ծրագրի իրականացում: Արդյո՞ք ճննուդու կաւույցումը առալել ցածր նիշերի վրա քի ենթադրում հետագայում գործող տնտեսվարողների գույքերի աղբարվում՝ այլ ներդրողների տրամադրելու նախատակով: Տնտեսվարողներից ոմանց համար առաջնային էր դիտարկվում պետական աջակցուայթյամբ նախ՝ զարգացման ծրագրի իրականացումը՝ տարբեր ժամանակահատվածներում իրականացված անարժեք ժամանակալոր կաւույցների փոխարինման ուղղուայթյամբ, և արդեն իսկ թարմացված հատվածում նոր ճննուդու իրականացումը: Առաջարկներում նշվեց նաև անտատաքաւո հատվածների պահպանուայթյան կամ անհրաժեշտուայթյան դեպքում ծառերի տեղալիոխման հնարալորուայթյունը: Տնտեսվարողների կողմից բարձրացվեց նաև Սևանա լճի պահպանուայթյանն ուղղված միջոցաւուոյնների, մասնալորապես՝ մաքրման տեխնիկական միջոցների իրականացման կարնալորուայթյունը: Հարցերի շրջանակում բարձրանալայնվեց նաև ճննուդու երկու կողմում իրականացվելից աշխատանքների մասին, որին ի պատասխան ալելեց, որ առայժմ դրանց կմնան ինչպես կան և միայն ճննուդու լայնկան կտրվածքում տեղալայնված կաւույցների նկատմամբ կիրականացվեն կամ տեղալիոխման, կամ ապամոնտաժման գործընթացներ:

Տնտեսվարողները, որոնց գույքերին անմիջականորեն հարելու է ճննուդին, հետաքրքրված էին՝ արդյո՞ք սանիտարական խզման անհրաժեշտուայթյամբ պայմանալորված ստիպված կլինեն մասնալի քանդել իրենց գույքը, ինչին ի

պատասխան պարզաբանել, որ տվյալ ճանաչումն ունի հետևումն նշանակություն և նման գրառումը չի նկատվում: Միևնույն ժամանակ իրականացնում գործընթացում կրթությանը ճիշտ մտնելով՝ նման դեպքերում չընթացելու և կանխելու տնտեսագործի գույքի վնասումը կամ քանդումը:

Որպես առաջարկ՝ նշվեց նաև տնտեսագործների հետ առանձին քննարկումներ անցկացնելու նպատակահարմարությունը, ինչը հնարավորություն կտա բոլորին իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններն ստանալ:

Հարցադրումներից զարգացնան ծրագրի մասով Ն. Պետրոսյանը տեղեկացրեց, որ առաջիկայում նախատեսված է առաջնայա հարվածների համար համալիր զարգացման ծրագրի իրականացում: Մյուս հարցերի մասով պատասխանեց կոմիտեի նախագահի խորհրդակցան Հ. Հովհաննիսյանը, որը հիմնականում նշեց, որ տվյալ շահն հիմնական նպատակը հենց ներկայացված առաջարկների հավաստագրումն էր, որոնց ուղղությամբ և փորձ կարելի քննարկումների արդյունքում գտնել նրկատեղ քննարկումների տարբերակներ:

Քննարկմանը ներկա՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ՀԱՄԳ փորձագնական կենտրոնի ներկայացուցիչ Հ. Սկրտչյանը հավելեց, որ նախագիծը ներկա է ՀԱՄԳ փորձագնություն:

Եզրափակիչ խոսքում կարևորվեց նման ծրագրի իրականացման նշանակությունը և պայմանավորվածություն ձեռք բերվեց ինչպես առանձին քննարկումների իրականացման, այնպես էլ տնտեսագործների կողմից բարձրամակարան հարցադրումներին և առաջարկներին ի քրուն առաջիկա 5-օրյա ժամկետում գրավոր ներկայացնել իրենց առաջարկներն ու հարցադրումները՝ համառոտել աշխատանքի միջոցով առավել արդյունավետ լուծումների մշակման նպատակով:

Ճանաչվող

«Արխիտոն» ՍՊԸ-ի տնօրեն՝



Ռ. Քարայան

Քննարկման պատասխանատու՝

Մասնի համայնքապետարանի աշխատակազմի ջարտերգար՝



Ա. Դովապյան

Արձանագրող՝

Ռ. Քարայան

ՅԱԼԿ


« ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և շտրաշարժիմանակա
 րության նախագծի և «Հարսնաքար» հազարի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ
 երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 երկր ճեմնադրու նախագծման մշակման աշխատանքների
 ֆ. 46847 Հանրային քման 02 07 2025

ԸԸ	Անուն ազգանուն	Պաշտոն	Կոնտակտ (հեռախոսահամար, էլ- փոստ)
1	2	3	4
1	Արթուր Արթուրյան	Վ. Կ. Կարապետյան	093-73-33-28
2	Արտուր Բաբայան	Արտուր Կարապետյան	093-91-90-16
3	Գրիգոր Կարապետյան	Արթուր Կարապետյան	093-63-63-02
4	Արտուր Կարապետյան	Արտուր (Կ)	094-088560
5	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	094-54-17-21
6	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	09660681
7	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	027-30-41-61
8	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-552758
9	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-363-91
10	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-30-90-20
11	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-388-660
12	Արտուր Կարապետյան	Արտուր	093 19 41 40
13	Արտուր Կարապետյան	Արտուր	093 27 41 51
14	Արտուր Կարապետյան	Արտուր	093 27 41 51
15	Արտուր Կարապետյան	Արտուր	093-252005
16	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-36-36-36
17	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	094-26-26-26
18	Արտուր Կարապետյան	Արտուր	093-20-45-11

19	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
20	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
21	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
22	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
23	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
24	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
25	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
26	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
27	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
28	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
29	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
30	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
31	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
32	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
33	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
34	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
35	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
36	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
37	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
38	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
39	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11
40	Արտուր Կարապետյան	Արտուր Կարապետյան	093-20-45-11









ԻնկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով կատարված գործառնության հաստատում

Գործառնության տեսակ՝ Վճարման հասկանաբարակում
 Գործառնության համար՝ N 682
 Գործառնության ամսաթիվ՝ 22.12.2025

Մանրամասներ

Տեսակ	Փոխանցում AMD-ով
Վճարող	ԱՐՄԻՏՈՆ ՍՊԸ
Վճարողի բանկ	Ինկեյթոնկ ֓ԲԸ
Վճարողի հաշվի համար	2050022506731001
Հարկային կոդ	01544108
Վճարվող գումար	300.000.00 ՀՀ Դրամ
Վճարվող գումարից բաժերով	Երեք հարյուր հազար ՀՀ Դրամ զրո Լումա
Շահառու	Կենտրոն
Հարկային տարածաշրջան	18/Կենտրոն
Շահառուի բանկ	Կենտրոնական գանձապահարան
Շահառուի հաշիվ	900005000196
Մանրամասներ	չըջակա միջ-վրա ազդ-փորձաք.հիմն

Փոխադրված է ԻնկոՕնլայնի համակարգից